


891.99.0920  
L-30



69.762

-6 NOV 2011

2714

Փ. ՎԵՐԴՈԶԱՐԵԾՆՅ

851.99.092 Բանական

4-30 Դր.

# ՎՃՏԻ ՈՒ ԹԱԽԻԾԻ

ԵՐԳԻՉ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

1002  
896  
1002

(Քննադատական փորձ)



ԹԻՖԼԻԶ 1905  
Էլեկտրական „ՀԵՐՄԱՆ“ Ընկ. Մադար. փող., 15.  
(20)

08.08.2013

Дозволено цензурою, 26 Маята 1905 года. г. Тифлисъ.

## ՎԵՏԻ ՈՒ ԹԱԽԻԾԻ ԵՐԳԻՑԸ

(Յովհաննէս Թումանեան)

### I.

Բանաստեղծը մի բարդ երևոյթ է։ Մենք  
կը կամ ենայինք ուսումնասիրել այդ երևոյթը,  
այսինքն հէնց իրան՝ բանաստեղծին—աչքի ա-  
ռաջ ունենալով այն հատորը, որ նա լոյս ըն-  
ծայեց անցեալ 1904 թւականին և որը, սա-  
կայն, հազիւ կէսն է նրա մինչև այդ թւա-  
կանը տպագրած երկերի։ Այս իսկ վերջին  
հանգամանքը վկայում է թէ որ աստիճանի  
խիստ է ինքը հեղինակը դէպի իրա Մուսան։  
Մենք մի կողմ կթողնենք միայն բա-  
նաստեղծի թարգմանութիւնները և Սասուն-  
ցի Դաւիթը—մի երկ որ արժանի է առան-  
ձին քննութեան։

### II. ԳԻՒՂ ԵՒ ԳԻՒՂ Ա.ՑԻ

Բանաստեղծի պօէմները վերաբերում են  
իրա ծննդավայրին—Լոռուն։ Մինչև այսօր էլ՝

«Պաս չենք այնտեղ մենք ուտում  
Ու ջերմեռանդ ադօթում,  
Ժամ ենք գընում ամեն օր.  
Բայց միշտ ցաւեր նորանոր,  
Միշտ մի աղէտ, մի վնաս...»

և այդ աղէտներից մէկն է «Մարօն»:

«Ժիր էր Մարօն, դիւրեկան,  
Նոր էր իննը տարեկան,  
Նըրանց սունը երբ մի օր  
Եկան երկու եկաւոր»

և ասացին՝ «հող տւէք մեղ ձեր տանից»։  
Մարօի հայրը գլխի ընկաւ որ եկաւորները  
հարսնախօսներ էին ու եկել ուզում էին աղ-  
ջրկան—իբրև «հող»։

Սա երկրային կեանքի փիլսոփիայութիւ-  
նըն է. Մարօին ուզում էին իբրև հող, իբրև  
մոխիր մի ուրիշ օջաղ շին պահելու։

«...Մին էլ Կարօն աղմուկով  
Եկաւ զուռնով-թըմբուկով.  
Ու Մարօին զուգեցին,  
Երեսին քող ձըգեցին,  
Հինա դըրին ձեռքերը...  
Եկաւ խաչով տէրտէրը,  
Տարաւ ժամում կանգնեցրեց.  
—Տէր ես, որդեակ, հարցրեց,  
—Տէր եմ, ասաւ մեր Կարօն,  
Լուռ կանգնած էր միշտ Մարօն...»

Եւ բանաստեղծը այս բոլորը պատմելես ոչ  
մի նշանով չյայտնեց ոչ իրա զայրոյթը, ոչ  
իրա վրդովմունքը—քանի որ այստեղ ամեն  
բան կատարւեց աղաթով։

Աղաթով եկան աղջիկ ուզեցին, տւին,  
տարան և—պսակեցին։

Բայց

«Մարօն ատեց իր մարդուն,  
Փախաւ, եկաւ ետ հօր տուն,  
Եկաւ լացեց նա վշտոտ,  
—Ես չեմ գնալ նըրա մօտ.  
Ես սիրում եմ մայրիկին,  
Ես չեմ ուզում լինել կին...»

Այս արդէն աղաթի դէմ մի բան էր.  
հայրը չէր կարող նրան իրա տանը ընդու-  
նել, եթէ չէր ուզում գեղամէջ խայտառակւել.

«—Դնւրս իմ տանից, սկերես,  
Ետ չընայես դէպի մեղ,  
Ոտ չըդնես էլ տունըս,  
Մըրոտեցիր անունըս...»

ասելով ու ծեծելով հայրը դուրս արաւ աղ-  
ջրկան։

Եւ ոչ ոքի մտքովն էլ չանցաւ բողո-  
քելու այսպիսի վարմունքի դէմ։ Եւ ոչ մի  
բողոք էլ տեղի չունեցաւ, ոչ Մարօի մօր  
կողմից, ոչ բարեկամների, ոչ աղգականների,  
ոչ քահանայի, ոչ էլ քեօխվի։

«...Ու, հալածւած իր հօրից,  
Փախած չոբան կարօից,  
Սոված, պատռած շորերով,  
Կորչում էր նա օրերով:  
Կուչ էր գալի խըղճալի  
Օջաղի շուրջ օտարի,  
Կամ թափառում մեն մենակ  
Անտառներում շարունակ:»

Այստեղ էլ բանաստեղծը մնաց առանց  
վրդովմունքի, առանց զայրոյթի: Նա չը-  
վերկացաւ ու այս խալիխն չ'աղաղակեց՝  
մարդասպաններ, դահիճներ: Զաղաղակեց—  
որովհետև մեղաւորը այս մարդիկը չէին, այլ  
աղաթը:

Այդ աղաթը սրանց համար նոյնն է  
ինչ որ օրէնքը, կամ էլ աւելի թունդ, և  
դրանք գնում էին աղաթով: Այդ աղաթով  
մարդուց փախած մի կնօջ ոչ ոք իրաւոնք  
չունի իրա տանը ապաստան տալու: Եւ ոչ  
ոք էլ չտւեց: Սակայն աղաթի այդ սոսկալի  
ծայրայեղ միջոցն էլ չօգնեց. ապաստանից  
զուրկ, քաղցած, սոված մերկ Մարօն իրա  
ատած մարդու մօտ չվերադարձաւ... ձգեց  
իրան ձորը ու մեռաւ:

«...Հեռու կանգնած երկիւղից՝  
Տեսանք՝ ահեղ էն ձորում  
Ոնց էր լալիս ու գոռում

Մարօի հայրն ալեոր,  
Մայրը ճշում սրգաւոր:  
Շատ լաց եղաւ և կարօն.  
Մեռաւ, գընաց մեր Մարօն:»

Այստեղ էլ բանաստեղծը չի զայրանում  
տեսնելով թէ ինչպէս Մարօի անմիջական  
դահիճները եկել հաւաքվել են նրա դիակի  
շուրջը լացով, կոծով ու ողբով,—չի զայ-  
րանում, որովհետև այդ բոլորն աղաթ է:

«...Սակայն անբախտ նըրա դին  
Պապի կողքին չըդըրին:  
Գիւղից հեռու մինչ այսօր  
Կայ ուռենի մի սրգուոր:  
Էն մենաւոր ծառի տակ  
Փոս փորեցին մի խորին,  
Առանց ժամ ու պատարագ  
Մէջը դըրին Մարօին.  
Էն լեռ քարն էլ տաշեցին,  
Բերին վըրէն քաշեցին:»

Եւ այսպէս Մարօն զոհ դառաւ ու հա-  
լածւեց մինչև իսկ գերեզման: Բայց դահի-  
ճը մարդիկ չէին—այլ աղաթը և այս է  
դրաման:

Մարօի հայրը նրան շուտ մարդու տւեց  
ոչ թէ դժբաղդացներու, այլ տեսակ տեսակ  
պատճառներից, նրան իրա տանից գուրս ա-  
րեց ոչ թէ նրա համար որ անտառներում

Թափառէր—այլ որ իրա նոր տունը, նոր օջաղը, իրա մարդու մօտ վերադառնար: Նա ի՞նչ կը մտածէր թէ աղջիկն իրան պիտի սպանէր:

Եւ դրաման սաստկանում է երբ ադաթին դաշնակից են գալիս նախապաշարումը և սնահաւատութիւնը. գիւղի այդ մարդիկ կարծում էին թէ՝

«Գրբացի չար ջանքով  
Գիր ու կապով բժժանքով  
Մանուկ սիրտը կըտրեցին,  
Կամ թէ նրա հանդերձին  
Էն անհոգի չար ջադուն  
Քսեց գայլի ճրագուն...»

Եւ բանաստեղծը մինչև վերջը ծըպըտուն չհանեց. ոչ իրա համակրամնքը, ոչ էլ իրա հակակրանքը յայտնեց: Նա մնաց մի կողմ, գուրսը, չէզոք, օբյեկտիւ: Եւ նրա փոխարէն մենք էինք վրդովւում ու գայրանում:

Այդ անպաճոյճ պօէմայով բանաստեղծը դրեց մեր առաջ ոչ թէ մի աղջկայ, այլ ամբողջ մի գիւղի, ամբողջ մի ժողովրդի կեանքի մի դրամա, բայց մի լուռ և անխօս դրամա: Եւ այդ սոսկալի լուռթիւնը աւելի խորհրդաւոր էր և աւելի բան ասաց մեր սրտին ու մեր հոգուն իրա սոսկալի բէալականու-

թեամբ, քան կարող էր անել 9 տարեկան մի երեխայի պատմութիւն:

Եւ այս դրամայումն էլ ինչպէս և իրա մնացած ստեղծագործութիւններում նա չի դիմել չափազանց բէալականութեան, արհեստականութեան, կեանքի գոյները խտացնելու՝ մեր ջղերի վրա ազգելու դիտորութամբ:

Եւ թէ այս և թէ մնացած բոլոր երկերի մէջ նա մնացել է միշտ բանաստեղծ՝ գործունենալով ընթերցողի սրտի և հոգու հետ և ոչ թէ իբրև մի բարոյախօս, մի քարոզիչ, մի իրաւագէտ, մի վիճակազրող, մի հրապարակախօս—որոնք մի խնդիր, մի հարց գնելիս մեզ համոզելու համար—դիմում են մեր խելքին ու մեր դատողութեանը:

Մի ուրիշ աղէտ և մի նոր դրամա է Անուշը, էլի մի ամբողջ գիւղի, մի ամբողջ ժողովրդի և ոչ թէ մի աղջկայ ու մի տրդի պատմութիւնը, մի Անուշի և մի Սարօնի: Այդ Անուշը և չոքան Սարօն սիրում են իրար՝—

«.. Քու էքրն ու մէրը թէ որ ինձ չըտան,  
Արին կըթափեմ ես գետի նման,  
Սարերը կընկնեմ կորչեմ անգիւման,

Այ սկ աչքերով,  
Այ ծով աչքերով,  
Ունքերը կամաք  
Աղջիկ, քեզ համար...»

Մի հարսանիքում կոխի ժամանակ Սարօն գետնում է Անուշի եղբօրը—Մօսիին:  
Ու հրէս մերդան ընկաւ աղաթը թէ—Մօսին  
անպատւած է:

Պըծաւ... սկսեց դըաման:

Ի՞նչ էր կատարւում Մօսիի մէջ երբ  
տուն էր վերադառնում էն հարսանքից: Նա  
լուռ էր, բայց լուռ չէր նրա խռով հո-  
գին որ նրան անդադար ու անվերջ յանդի-  
մանում էր և կշտամբում՝

«—Ամօթքեղ, Մօսի, թհւք ունախատինք,  
Ամօթք բեղ նման գոված իգիթին,  
Մի անունդ յիշիր, մի բոյիդ մլտիկ.  
Դեռ քու թիկունքը չէր տեսել գետին:  
Ի՞նչպէս վեր ընկար դու սարի նըման,  
Երբոր նայում էր ողջ գիւղը կանգնած...  
Դու... կուճ գաս տակին Սարօի ծընկան,  
Նըրանից յետոյ երես կանանց...  
Եկած էր էս բանն իսկի քու գըլխին...  
Ծաղրատեղ դառար բովանդակ գեղին...  
Դէ մեռիր էլի, գետինը մըտիր,  
Տանը վեր ընկիր՝ իլիկ պըտըտիր...»  
Էլ Մօսին ի՞նչ Մօսի է որ իրան վրէժը  
չառնի... (10)

Եւ առաւ էլ—իրա ձեռից սար ու ձոր ընկած  
Սարօին մի գիւլով սպանեց իբրև մի որսի:

Սպանելուց յետոյ չէ որ տուն պիտի  
վերադառնար: Եւ վերադառնում է, — բայց  
ի՞նչպէս:—

«Դէմքը այլայլած, բայլւածքը մոլոր,  
Սարսափ է կաթում արնոտ աչքերից,  
Եւ կերպարանքը փոխված է բոլոր:  
Առանց նայելու մարդկանց երեսին,  
Առանց խօսելու, սեակնած, դաժան,  
Մօտեցաւ սրահին, կախ տըւաւ սընին  
Սև հըրացանը, սև օձի նըման:  
Պապանձւեց նոյնպէս ամբոխը մեխւած,  
Ոչ ոք ծըպըտալ չի համարձակւում»:

և այս լուռ, անխօս տեսարանը մի սարսա-  
ֆելի բայց խորհրդաւոր դըաման է:

Մի կողմ կանգնած է մարդասպանը:  
Ի՞նչո՞ւ է սարսափ կաթում նրա արնոտ աչ-  
քերից: Ի՞նչո՞ւ չի նայում մարդկանց երեսին:  
Ի՞նչո՞ւ չի խօսում, սեակնած, դաժան:

Մօսիի դէմ ու դէմ կանգնած է ամբո-  
խը, գիւղը: Ի՞նչո՞ւ նա էլ է լուռ: Ի՞նչո՞ւ է  
նա մեխւել պապանձւել: Ի՞նչո՞ւ ծըպըտալ չի  
համարձակւում նա էլ:

Որովհետեւ այստեղ կատարւել էր մի ոճ-  
րագործութիւն, մի մարդասպանութիւն, իսկ  
ոճրագործին ու մարդասպանին ոչ ոք չէր

կարողանում բռնել — թէև ամենքը նրան  
ճանաչում էին, թէև նա ներկայ էր, բայց  
անտեսանելի, անշօշափելի, առանց մարդ-  
կային կերպարանքի — և դա ադաթն էր:

Եթէ սպանւած Սարօն մի գող, մի ա-  
ւազակ լինէր — Մօսին սպանութիւնից յետոյ  
կվերադառնար խրոխտ և հպարտ ու ամբո-  
խըն էլ նրան կընդունէր ցնծութեամբ: Բայց  
այս այդպէս չէր:

Եթէ Մօսին սպանած լինէր մի անմեղ  
մարդու — սպանութիւնից յետոյ նա թաք-  
կկենար և մարդկանցից և օրէնքից ու ամբո-  
խըն էլ հէնց որ նրան տեսնէր — կկարանաւո-  
րէր նրան: Բայց այս այգպէս էլ չէր:

Եթէ վերջապէս Մօսին Սարօն սպա-  
նէր մենամարտութեան մէջ — գլուխը քարը —  
բայց այս այգպէս էլ չէր: Այստեղ յանցա-  
ւոր էին ամենքը և ոչ ոք: Ամենքը յանցա-  
ւոր էին այստեղ — միայն թէ իբրև գործիք-  
ներ: Իսկական մեղաւորը ադաթն էր, որին  
չէին կարողանում բռնել և մնացել էին շւար  
և մեխուել պապանձւել էին ու ծըպտալ  
չէին համարձակւում:

Այդ ադաթը վրէժառութեան թոյնը գիւ-  
ղացիների ձեռքով ածել տւեց Մօսիի սիր-  
ուը ու սրան ակամայ մարդասպան դարձրեց:

Այս է դրաման և տրագեդիան:

Մենք ընդգծեցինք գլխաւոր հերոսին —  
բայց թէ բանաստեղծի այս պօէմը մի գեղե-  
ցիկ ստեղծագործութիւն է, ուր նա հոգիաց-  
րել է և կօռու բնութիւնը և կօռու գիւ-  
ղացիներին: Այս պօէմում Փերիները գիշերով  
սարի վլխին ջահել սիրահարի վաղամեռ սէ-  
րըն են ողբում, սարի ծաղկունք հառաջում,  
փունջ-փունջ աղջկերք կժերը ուսած ջրի  
են գնում և Համբարձումին վիճակ հանում,  
պառաւ կանայք երազներ են բացում, որբա-  
ցած նանը ողբ է անում, Սարօն Անուշին է  
փախցնում ու ետ տալիս, փախցրած ու ետ  
տւած աղջկան խոստովանեցնում է տէրտէրը..

Իսկ Անուշին՝ ագաթի այդ կենդանի մնա-  
ցած զոհին բանաստեղծը պօէմայի վերջում  
ցոյց է տալիս մեզ կիսախելագար, հերարձակ,  
մոլոր, անկապ երգերով, ծիծաղ ու լացով...

*Վերջում անձնագիրը կամ անձնագիրը կամ անձնագիրը*  
Եւ Անուշի մէջ էլ բանաստեղծը չդի-  
մեց արհեստականութեան, նա մնաց դուրսը,  
չէզօք, օրյեկտիւ, ոչ իրա համակրանքը ոչ  
էլ հակակրանքը յայտնեց:

Մի նոր աղէտ և մի նոր զոհ Սաքօն է:  
Մի մարդ՝ սրտի և ոչ թէ խելքի, բնութեան  
մի զաւակ, մի չոբան, ինչ աժդահա էլ որ

Նա ուզում է լինի, —երբ գտնուում է մեն  
մենակ, այն էլ գիշեր ժամանակ մի ահոելի  
ձորում և երբ միտն են ընկնում իրա նա-  
նի հին հին զրոյցները և նրան թւում է թէ  
հրէս՝ էն ահոելի ձորիցը ելան ու իրա մօ-  
տըն են գալիս «ուրախ խմբով, ծուռն ոտ-  
ներով, չարքերը—թուրք կանանց կերպա-  
րանքով, այրերի մթնից, ծանօթ ձայներով  
կանչող քաջքերը չար ժպիտներով, ժանտ  
ու սկերես, տգեղ այլանդակ...» գալիս են,  
մօտենում են, մտան... և նա սարսափած ու  
խելագար դուրս է փախչում իրա տնակից...

Եւ այս թշւառութեան մէջ մեծ մաս-  
նակցութիւն, ուրեմն և մեղաւորութիւն ու-  
նի նոյն ժողովրդի նախապաշարումն ու սնա-  
հաւատութիւնը:

Ինչպէս պարզ է որ այս երեք պօ-  
էմների հերոսները չոբաններ են—նոյնքան  
պարզ է որ այդ պօէմները մի մի գաղափար  
են ներկայացնում բանաստեղծի վրձինի  
տակ և առած են հայ ժողովրդի աղաթներով  
ու սնահաւատութիւններով լի կեանքից:

Պօէմ է, այն էլ մի ամբողջ կեանքի  
պատմութիւն հայ գիւղացու գութանի երգը.

«Արի, գութան, վարի, գութան,  
Օրն եկել է, ճաշ դառել,  
Առը շուռ տուր, խոփիդ զուրբան,  
Օրհնեալ է Աստուած, հօրօւէլ:

Քաշիր, եզր ուսիդ մատաղ, \*)  
Քաշիր՝ քաշենք, վար անենք.  
Ճիպտին արա, քըշիր, հօտաղ,  
Մեր սև օրին ճար անենք:

Պարտքատէրը գանգատ գընաց,  
Քեօխւէն կըգայ, կըծեծի,  
Տէրտէրն օրհնեց, անվարձ մընաց,  
Կըբարկանայ, կանիծի:

Էն օրն եկան թօւջի արին,  
Հարկ են ուզում տէրութեան.  
Ինչ տամ կոռին ու բէգեարին...  
Վարի, վարի, իմ գութան»...

Որ և է զւարճութեան, ուրախութեան  
մասին և ոչ մի ակնարկ, այլ միայն միալար  
մի մտածում «սև օրին ճար անելու» և դրա  
համար էլ հայ գիւղացին շատ է աշխատում  
և շատ է շտապում. Նրա մտքից դուրս չեն  
գալիս ոչ պարտքատէրը, ոչ տէրտէրը, ոչ  
քեօխւէն, հարկերը, ոչ էլ իրա մերկ զա-  
ւակներով ու 1001 ցաւերով լի տունը:

Եւ որովհետեւ բանաստեղծը ապրել է  
այդ գիւղացու կեանքով, դրա համար էլ այդ

\*) Գիւղացին հէնց եղան անունը կտար:

Երգը սրտառուչ և սրտաճմիկ մի ողբ է այդ  
գիւղական սև կեանքի:

Հայոց աշխարհի այս ու այն անկիւնից  
եկել հասել են բանաստեղծի ականջին պէս  
պէս աւանդութիւններ։ Սկզբում դրանք մի  
պարզ առակի, մի գւարճալի պատմութեան  
տպաւորութիւնն են անում։ Բայց երբ խո-  
րըն ենք նայում, տեմնում ենք որ դրանցից  
ամեն մինը ունի մի որ և է իմաստ և պատ-  
կերացնում է մի գաղափար։ Այդ աւանդու-  
թիւններով հայ ժողովուրդը, ինքն էլ իբրև  
բանաստեղծ, կամեցել է այլաբանօրէն ներկա-  
յացնել իրա ազգային յատկութիւններից մի  
քանիսը, իրա կեանքի այս ու այն զիծը։

Աննամուս մարդուն է նա ներկայաց-  
նում չար ու խորամանկ կատի կերպարան-  
քով, որ Շան բերած մորթուց փոխանակ մուշ-  
տարու համար գդակ կարելու՝ իրա համար  
քուրք է կարում—իսկ Շանը մինչ օրս էլ  
տանում բերում է թէ հալա «նոր եմ ցրցամ  
տւել որ կարեմ» և իբրև թէ այդտեղից է  
առաջ եկել դրանց դարաւոր թշնամութիւնը։  
Նամուսաւորին է նա ներկայացնում

Խեղճ ու ողորմելի Զըդջի ու պըպենակի \*)  
մերկ ու տկոր կերպարանքներով—որոնք ի-  
րանց ամօթից դարեր ի վեր քաշւում ու  
փախչում են մարդկանց ու լոյսի երեսից։  
Անխղճութեան սիմվոլը նա ներկայացնում  
է իբրև Փուշոր, ցամաք, անհոգի, կպչող,  
քարշող, որից ամենքը խորշում են և նա մնում  
է մենակացած։

Ստրուկ հայ հարսին, որ իրաւունք չու-  
նի լեզու բաց անի ոչ ոքի առաջ, նա ներ-  
կայացնում է Յօպոպի կերպարանքով, մի թըռ-  
չունի որ ուրիշ թոչունների պէս կարող էր  
քաղցրահնչիւն ու թովիչ երգեր երգել—բայց  
որը սակայն միայն յօ պոպ է իմանում արտա-  
սանել—մի բացականչութիւն որ գործ է ա-  
ծում ինքը ժողովուրդը վախի և զարմանքի  
բօպէներին \*\*) և այդ յօպոպն էլ հայ հարսի  
պէս չալիկ մալիկ է, անխօս ու լուռ։

Անձարութիւնն է նա ներկայացնում, հայ  
որբերի անձարութիւնը խորթ մօր ձեռքին—  
Պողոս Պետրոս թոչունների կերպարանքով  
որոնք մինչև օրը էլ—Պօղոս՝ գտանը.  
—Զէ,

\*) Պեպենակը ջրի վրա թոչող մի թիթեռ է։

\*\*) յօ, պօ, պօ պօ։

—Պետրոս, գտամբ

—Չէ

Են կանչում կարծես մի կորցրած բան որով նելով և չդանելով մնում են անձար՝ որբերի նման անտէր, մոլոր, տիսուր, մինչև օրս էլ ծւռում ու մնչում:

Այդ բոլորը ցաւեր են ու չարիքներ որ տանջում են այդ ժողովրդին որը և գիտակցել է այդ ցաւն ու տանջանքը:

Եւ թումանեանը իրա լէգենդներում հաւասարիմ է մնացել այս աւանդութիւնների հոգուն և նրա համար էլ դրանք մի մի պօէմներ են ժողովրդի ցաւի ու տանջանքի:

Թումանեանը կենդանացրել է այդ աւանդութիւնները շունչ և հոգի ներշնչելով դրանց և ամեն մէկի համար ստեղծել մի յարմար շըջանակ:

Ահա հայ հարսը. — «...մենակ օդում նստած իրա ճոխ մաղերն էր սանրում» ու իրա վիճակը լալիս —

...«Ա.իս, սեւ ըլի,  
Զըբւի փըլի

Ծընւած օրը աղջկայ՝  
Ցաւ ու խընդում

Փակած ոլրտում,  
Ծիծաղ չըկայ, «ախ» չըկայ...»

Հայ հարսի երգը չաւարտած — հրէս յայտնւում է էլի աղաթը, այս անգամ քաւտառ պառաւ սկեսուրի կերպարանքով ու այդ երգի համար յանցաւոր հարսի գլխին տեղն ու տեղը դատավճիռ ու պատիժ արձակում»

«—Յօլօպ դառնաս,

Անամօթ հարս:  
Մի տես, մի տես,  
Թէ լըրը պէս  
Գլուխը բաց,  
Ազատ նստած՝  
Ո՞նց է կանչում,  
Զի ամանչում...  
Լեզուդ լալի,  
Մազըդ թաղքի,  
Գլխիդ կըպչի  
Սանըը միջի»:

Եւ կարկուտի պէս թափւող այս անէծքը ի միսիթարութիւն անխիղճ աղաթին կատարւում է և էն օրից հայ հարսը յօպոպ դառաւ ու յօպոպ մնաց — չալիկ, մալիկ, անխօս ու լուռ:

Ահա ձեզ հայ որբերը ու իրանց խորթ մէրը, —

«—Կորէր, գընացէր, աշխատանք արէր  
Աշխատանք արէք... ու եկէք կերէք.

ի՞նչէք վեր թափել անզործ ու անբան,  
Հասած տղերը էք հինգ-վեց տարեկան...

Այսպէս բարկացաւ մի օր խորթ մէրը,  
Ճիպոններ տըւաւ, դրկեց հորթերը:  
Սնհանդիստ հորթեր, ամառան շոգ օր,  
Կիս արին, փախան, ընկան սար ու ձոր»:

Որբերը շատ են որոնում ու ետ դառնում տուն. հորթերի տեղ միայն խաբարն  
են բերում: Բայց իրանց խորթ մէրը խոմ  
չի մեռել պրծել, որ նրանք անպատիժ  
մնան:

Ի հարկէ չէ.—

«—Վայ, գետինն անցնէք, ճըչաց խորթ  
մէրը,  
Թող դուք կորչէիք հորթերի տեղակ  
Անտակ ձորի մէջ, անժաժ քարի տակ:  
Մի արջ պատահէք, մի զաղան, մի գէլ,  
Որ չէի տեսել ձեր շուքը մէկ էլ...  
Դէ, ետ գընացէք, գընացէք կորէք,  
Մինչև չըգըտնէք հորթերը բերէք  
Աշբիս չերեաք, այ աչքիս փըշեր,  
Թէ չէ կըսպանեմ ես ձեղ էս գիշեր...»

Ու անճար որբերը ետ դառան, հանդ  
ու չոլ, սար ու ձոր ընկան որ հորթերը գըտ-  
նեն—բայց թէ նրանք չկան ու չկան: Այն  
ժամանակ աղաչանք արին Աստծուն որ ի-

բանց թևեր տայ, թոչուններ դարձնի որ հոր-  
թերը շուտ գտնեն ու ապա թէ տուն վե-  
րադառնան: Եւ Աստուած որ գթոտ է և ո-  
ղորմած, չկամենալով որ որբերը էն գիշեր  
խորթ մօր ձեռքով սպանւին—սրանց թևեր  
տւեց, Պօղոս—Պէտրոս դարձրեց և մինչև օ-  
րըս էլ դրամնք—

«Ծըւում են, մընչում,  
Մէկ մէկու կանչում.  
—Պօղոս, գտա՛ր,  
—Զէէ:  
—Պէտրոս գտա՛ր:  
—Զէէ:  
—Վայ-վայ, վհւյ-վույ,  
Վայ-վայ, վհւյ-վույ»:

ու մնում են թոչուն և անճարութիւնից  
տուն չեն վերադառնում որ չսպանի նրանց  
խորթ մէրը:

Այսպէս ուրեմն հայ ժողովրդի ամեն |  
քայլափոխը մի ցաւ է, մի թշւառութիւն, Եւ  
նա՝ այդ ժողովուրդը տանում է այդ կեան-  
քի լուծն ու ճնշումը հլու և խոնարհ:

Եւ անկամակած է որ հայ ժողովուրդը  
զգում է և գիտակցում իրա այդ վիճակը.—

«Կանաչ, վիթխարի ընկուզենու տակ,  
Իրենց հասակի կարգով, ծալապատակ»  
Միասին բազմած  
Մի շըրջան կազմած,  
Քէֆ էին անում  
Եւ ուրախանում  
Մեր հըսկայ պապերն ու մեր հայրերը՝  
Գիւղի տէրերը:  
Մեսք, առոյգ ու ժիր գեղջուկ մանուկներ,  
Երեք դասընկեր,  
Նըրանց առաջին գըլխաբաց կանգնած,  
Չեռքներս խոնարհ սըրտներիս դըրած,  
Զիւ, ուժեղ ձայնով նըրանց ըսպասում  
Տաղ էինք ասում:  
Երբ զըւարթաձայն մեր երգը լըռեց,  
Մըրայլ քամադին բեկսելն ոլորեց,  
Նըրա հետ վերցրին լիք բաժակները  
Բոլոր մեծերը  
Ու մեզ օրինեցին.—Ապրէք. երեխէք,  
Բայց մեզ պէս չապրէք...»

Պարզ է որ հայ ժողովուրդը զգում է և  
գիտակցում որ իրա ապրած կեանքը կեանք  
չի և նրա «մեզ պէս չապրէքը» մի բացասա-  
կան իդէալ է,—բայց թէ ինչպէս պէտք է  
ապրել երջանիկ լինելու համար—այդ նա  
չի իմանում. և դրա համար էլ նա չի կարո-  
ղանում առաջարկել մի որոշ և դրական իդէալ  
երջանիկ կեանքի: Բայց հայ ժողովրդի սրտում  
անպակաս է հաւատը, յոյսը թէ նրա ապրած

կեանքը, վիճակը պիտի փոխւի մի պայծառ  
ապագայով և այդ հաւատի ու յոյսի մեծ,  
հսկայական նշանակն է որ նոյն ժողովուրդը  
պատկերացրել է իրա «Լուսաւորչի կանթեղ  
աւանդութիւնով:—

Կէս գիշերին կանթեղը վառ  
կախ է ընկած երկընքից,  
Լուսաւորչի կանթեղն անմար  
Հայոց մըթնած երկընքից:  
Կախ է ընկած առանց պարան  
Արագածի կատարին,  
Ու սեղանից հըսկայական  
Լոյս է տալի աշխարհին...  
Երբ պատում է մութ խաւարը  
Զընաշխարհիկ մեր երկընքին,  
Երբ տիրում է ահն ու վախը  
Թոյլ, կասկածոտ սըրտերին,  
Ով անմեղ է, լիբը սիրով  
Ու հաւատով անսասան,  
Ով նայում է վառ յոյսերով  
Դէպի Հայոց ապագան,  
Նա կըտեսնի այն մըշտավառ  
Զահը կախւած երկընքից,...»

### III. ՔՍ.ՂԱ.Ք ԵԽ ՔՍ.ՂԱ.ՔՍ.ՑԻ

Գիւղից բանաստեղծը տեղափոխւել է  
քաղաք և սրան են նւիրած նրա մնացած  
պօէմներն ու լեզենդները:

Նրա «Պօէտն ու Մուսան»—այդ կծու  
երգիծաբանութիւնը քաղաքի բարքերի—ինքն  
ըստ ինքեան մի տրագի—կոմեդիա է։ Այս  
երկու տարրը մի ծայրից միւսն են գնում  
ձեռք ձեռքի տւած, իրալու գրկած, իրար  
հետ խառնւած։

«Եստած եմ մի օր ու միտք եմ անում.  
Միտք եմ անում, միտք, ու չեմ կարենում  
Մի հընար գտնեմ՝ ցաւերըս հոգամ...  
Վեր կենամ, ասի, մէկի մօտ դընամ,  
Կրկին պարտք անեմ, գլուխը բարը,  
Մինչև որ տեսնենք ինչ կըլնի ճարը։»

Դուք արդէն ծիծաղում էք—բայց մի-  
անգամայն անտեղի։ Բայց թէ դուք ծիծա-  
ղում էք—վարակւելով բանաստեղծի ծիծա-  
ղից—որը սակայն իսկի ուրախ ծիծաղ չի,  
իսկի ծիծաղ էլ չի։

Որտեղից որտեղ այդ դժւար ըօպէին  
բանաստեղծի առաջն է տնկւում նրա բա-  
րի հրեշտակը, նրա Մուսան որ նրան պօէտի  
ձիրք էր տւել։ Եւ ահա նրանք մենակ են,  
նրանց ականջ գնող չկայ և բանաստեղծը  
բաց է անում սրան իրա սիրտը և իրա դար-  
դերը անկեղծօրէն պատմում։

Կեանքի առօրեայ անհրաժեշտ պիտոյք-  
ները հոգալու համար բանաստեղծը յանձն-  
էր առել իրա հոգուն ատելի պաշտօններ—

պիսերի, պրիկազչեկի, կանտօրշչիկի, բուխ-  
գալտերի պաշտօններ—և ոչ մի տեղ յաջո-  
դութիւն չունեցաւ ու դիմանալ չկարողա-  
ցաւ. ամեն անգամ նրա բարի հրեշտակը, նրա  
Մուսան եկել էր նրա գործերը տակն ու  
վրա արել և նա կամ ինքն էր իրա պաշ-  
տօնը թողել փախել, կամ խօզէյինները ի-  
րանք էին նրան վոնդել։

Եւ դուք, որ դուրսը կանգնած լսում  
էք այս ձեզ համար ծիծաղաշարժ արկածնե-  
րի պատմութիւնը—անզուսպ ծիծաղում էք—  
բայց թէ էլի անտեղի։ Բայց ծիծաղում էք  
էլի վարակւելով բանաստեղծի ծիծաղից, որը  
սակայն խոմ մի ուրախ, դւարթ ծիծաղ չի  
—այլ ակամայ ծիծաղ, դառն ծիծաղ, զօ-  
ռով ծիծաղ։ Այդ ծիծաղի տակ արտասուք  
կայ. դա Գոգոլի ԸՄԵԽԵ ԾԿՅՕՅ ըլեզա՞ն է։

Այդ ծիծաղը դիմակ էր. իսկ իսկու-  
թիւնը հրէս սա է։—

«...Լինել ի ծնէ գերի  
Մերկ մուսայի ու երգերի,  
Որդիք ու կին  
Թողած բախտին,  
Մերձաւորի ծաղը ու ծանակ,  
Ուժից ընկել անժամանակ—  
Թէ պօէտ եմ... օ, ոչ, Մուսա.  
Մի անարդար պատիժ է սա...»

Այդ պատիժը պատիժ էր թէ ինչ էր,  
բայց թէ նրան այդ էր վիճակւած և նու  
պէտք է ապրէր այդ ձիբով, պօէտի ձիբ-  
քով:

Եւ նա սկսեց ապրել իբրև պօէտ:  
Եւ ահա ձեզ բանաստեղծական արկած-  
ների մի նոր շարք:

Իբրև պօէտ էլ նա հանդիպում է նոր  
վոնդողների:

Ահա ձեզ հայ խմբագիրը: Սա չի ու-  
զում նրան բանաստեղծ ճանաչի ու բացէ  
ի բաց մերժում է նրա լեզենդները իբրև  
«գուենիկ»: Իսկ գրած ու բերածից եթէ մի  
բան ընդունում է, ուզում է անպատճառ «սի-  
րունացնի» և դրա համար էլ իրա սեփական  
«ոտներն» է առաջարկում ու ներս կոխում:  
Իսկ ամենից յաճախ այդ խմբագիրը իրա  
«զակազներն ու պատէրներն» է տալիս:

Դուք ծիծաղում էք—բայց էլի անտեղի:  
Ահա ձեզ հայ քննադատը, մտրակող քըն-  
նադատը—սա էլ է նրան վոլնդում: Թէ սա-  
նվ է, այս խակ նորեկը. մենք այդ տեսակ  
մարդ չենք ճանաչում. չենք էլ ուզում ճա-  
նաչել. ուրիշ բան է հները... մենք այդ լսել  
ենք ու գովում ենք, իսկ սա—այս խակ տը-  
ղան թէ որ բանաստեղծ է՝

«...թող մի գործ շինի,  
Որ հացի վարձի գառնայ արժանի.  
Թէ չէ յամառի ու մընայ պօէտ՝  
ի՞նչ հաշիւ ունի ազգը նըրա հետ.  
Ազգը հօ նըրան չի խընդըռում գըրի...»

Հայ քննադատին—կատարելապէս հա-  
մաձայն է և հարուստ մեծատունը, որ երբ  
բանաստեծից լսում է սրա պօէտ լինելը  
«հասկացանք, ասում է, պարապ ես եղել»:

Եւ դուք էլի ծիծաղում էք—բայց էլի  
անտեղի:

Նրա ընկերները—«սրտացաւ, անկեղծ,  
մտերիմ» ընկերները—նրանք էլ նոյն կարծի-  
քի են լինում, հէնց որ բանաստեղծը ստիպ-  
ւած է լինում նրանց օգնութեանը դիմելու:

Եւ ամենքը վլընդում են նրան ու մեր-  
ժում, երես դարձնում,—որովհետև ամենքն  
էլ այստեղ, քաղաքում, վարակւած են մի  
ախտով—փայլ ու փողի պաշտամունքով, ապ-  
րում փողով և փողի համար—ի՞նչ արժէք  
ունի նրանց աչքում մերկ բանաստեղծը իրա  
հաց չբերող բանաստեղծութիւնով:

—«Դէ եկ, սիրելիս, տանեմ քեզ եր-  
կինք...»

Կամ կուզես թըոցնես հանեմ Ոլիմպոս...  
—իմ ազնիւ Մուսսա,  
Այ էլպէս խօսա:

Իրաւ, այս կեանքից ես շատ եմ զըգւել։  
Ի՞նչ երանութիւն՝ երկընքում սուզել,  
Ու սիրոյ երգեր յօրինել,  
Երկրային չընչին հոգսերը թողած...  
Կամ, ոտներն հանդիստ ժայռերից կախած  
Նըստել Պառնասի երջանիկ գըլիսին  
Ու բարձրից նայել այս յիմար խալիսին։

Դուք ուզում էք էլի ծիծաղել. բայց զըս-  
պեցէք ձեր ծիծաղը։ Այդպէս է խօսել և  
Պուշկինը իրա գիմացը կանգնած ամքոխին։

«Подите прочь, какое дѣло поэту  
Мирному до васъ» баядѣկанչելով. այդպէս  
կարող է խօսել մի փիլիսոփայ տարւած իրա  
փայփայած մի գաղափարով, այդպէս կա-  
րող է խօսել մի արտիստ խարւած իրա  
գեղարւեստով, մի սուրբ՝ որ ճանաչել և պաշ-  
տում է իրա Աստուծուն։

Եւ այդպիսի րօպէներում դրանցից տ-  
մեն մէկը մի միզանտրոպի է, մի մարդատեաց  
է, որովհետեւ այդ խալիսը սրանց աչքում ոնց  
որ ճիճուներ լինեն գետնի փռա քարշ եկող  
և միանգամայն անընդունակ ըմբռնելու ի-  
րանց պաշտած գաղափարը, գեղարւեստը,  
Աստուծումը։

Եւ յանկարծ այս գրամային ու տրա-  
գեդիային հետեւում է կոմեդիան։ —

«Բայց ես ունիմ կին, շատ երեխաներ,  
Նըրանց բանն այնտեղ ի՞նչպէս կը լինէր...  
Կարող ենք այնտեղ նըրանց համար էլ  
Թէկուզ ապառիկ միշտ ապրուստ ճարել»։  
Եւ ձեր էլի անտեղի ծիծաղից—երկինք  
չհասած բանաստեղծը մնում է այս ցած եր-  
կրի վրա, ձեզ հետ միասին բայց առանձին։

Այսպէս ուրեմն—հայկական կեանքը բա-  
ցի զրամայից ու տրագեդիայից տալիս է և  
կոմեդիա։ Առաջինները նկարելիս բանաստեղ-  
ծը մնաց բացակայ, դուրսը, օբյեկտիւ, իսկ  
կոմեդիայում—ծիծաղի գիմակով իբրև հու-  
մորիստ։

Տրագի-կոմեդիա է և Շան ու Կատւի պատ-  
մութիւնը։

Ժողովրդական այս աւանդութիւնը բանա-  
ստեղծի ձեռքն ընկնելուց և սրա բովին են-  
թարկւելուց այնքան ժողովրդական դառաւ  
որ մենք այստեղ չենք երկարիլ։ Այսքանը  
կասենք որ հայ երեխաներն անզամ գնահա-  
տել են կոմեդիան ըստ արժանոյն և մինչե  
անզամ հնար են գտնում սրան բեմափարի  
ներկայացնելու։ Եւ այսքանն էլ պարզ է

որ կատուն աննամուս և սևերես մէկն է,  
երբ ուրիշի ապրանքից իրա համար քուրք է  
կարում, մէջը փառաւոր ման դալիս ու կո-  
տըր ընկնում ետ չտալու մտքով։

Բողոքովին հակառակ հոգու տէր են ձայն  
ու զիղջը։

Սրանք էլ քաղաքացիներ են և համա-  
կւած են փողի, հարստութեան ախտով։ Հա-  
րստանալու համար վճռում են երկուսով ըն-  
կերանան առուտուր անեն։

«Բայց՝ արի տես... որ փող չունեն։  
Շատ միտք արին, թէ ինչ անեն։  
Վերջը եկան Փըշի մօտը,  
Ընկան նըրա ձեռն ու ոտը,  
Ու մուրհակով,  
Շահով, կարգով,  
Փող վեր առան բաւականին,  
Ինչքան պէտք էր իրենց բանին։  
Զիղջը մընաց, տընպահ դառաւ։

Ճայը բոլոր փողերն առաւ,»  
ու նաւով գնաց խրիդի հեռու օտար երկիր-  
ներ։

Այդ երկու ընկերները երկի բախտ չու-  
նէին. ետ դառնալիս խրիդ արած ապրանք-  
ներով լի նաւը խորտակումէ և ծովի տա-  
կը գնում. ազատւում է միայն Ճայը։

«Ազատուեցաւ—փառք իր Ասծուն,  
Բայց ի՞նչ սըրտով խեղճը գայ տուն.  
Դայ—ի՞նչ ասի պարտքատէրին,  
Ո՞սց երևայ իր ընկերին...»

Եւ սևերես չերևալու համար ոչ պարտ-  
քատէրին ոչ էլ խալխին—մնաց մարդկան-  
ցից հեռու ծովի երեսին—ջուր ընկած ապ-  
րանքները գտնելու և պարտքը լիովին վե-  
րադարձնելու յոյսով։ Այդպէս է թելադրում  
նրան նամուսը, աբուոը։ Ընկերոջ բանը ա-  
ւելի գէշ էր։ Պարտքի օրը հասաւ թէ չէ

«...Մուրհակի թուղթը ձեռին.  
Փուշը տընկւեց կըտեր ծէրին,»  
և այդ օրւանից սկսւեցին Զղջի տանջանք-  
ները։ Փուշը—

«Գուգոռում էր ողջ թառակում,  
Հայհոյում էր, խայտառակում.  
—«Ե՞յ, բարեկամ, ի՞նչ բանի էք.  
Էլ չէք ասում թէ պարտք ունէք...  
Թուղթ էք տըւել՝ վախտ իմացէք,  
Ամօթ, աբուու, ահ ունեցէք...  
Թալան հօ չլու... մեղք եմ ես էլ...  
Ախպէր, էսպէս բան էք տեսել՝  
Ոսկի տայ մարդ իրեն ձեռով,  
Չըկարենայ առնել զոռնվ...  
Սրանից յետոյ գէ արի դու  
Ու ձեռ մեկնիր աղքատ մարդու...»

Անհոգի Փուշի այս անխիղճ խօսքերը

գուցէ ասելու բաներ լինէին մի անամօթ  
Կատոի—սրան նամուսի բերելու համար։ Բայց  
այստեղ ախըր տեղը չէր և եթէ Փուշը ա-  
սում էր—ասում էր դիտմամբ, որ կարողա-  
նար Զըզին ամաշայնելով իրա փողերը ոնց  
որ լինի ետ ստանայ։ Այս էլ չմոռանանք որ  
Փուշին յայտնի էր այն ձախորդութիւնը, որին  
հանդիպէլ էին իրա դժբաղդ պարտատէրերը.  
որ ծովն էր տակովն արել դրանց փողերը և  
ոչ թէ իրանք։ Բայց աղա Փուշը ձախորդու-  
թիւն, մախորդութիւն չէր ընդունում և մի  
զուխ գոռգոռում էր և հայիոյում։

«Զըզին էսպէս միշտ լըսելիս  
Սիրաը բերնով գուրս էր գալիս...  
—էս ինչ ցաւ էր, Աստուած վըկայ.  
Ի՞նչ իմ բանն էր՝ մըտայ մէջը,  
Որ խայտառակ լինեմ վերջը...  
Ի՞նչպէս պըրծնեմ էս կըրակից,  
էս ահագին պարտքի տակից.  
Էլ ի՞նչ ասեմ,  
Ո՞նց ըսպասեմ.  
Նա երբ կըգայ, ի՞նչ իմանամ,  
Ո՞ր ջուրն ընկնեմ... ում մօտ գընամ...  
Շատ միտք արաւ,  
Դէս դէն թըսաւ,  
Ի՞նչ որ ունէր տանը, հազին,  
Ողջ հաւաքեց, տըւաւ պարտքին,  
Ցիփ մերկացաւ,

էլ չըպըրծաւ։

Վերջը տեսաւ, որ ճար չեղաւ,  
Թէկեր առաւ, ինքն էլ փախաւ,  
Փախաւ, կորաւ, որ էլ էնպէս  
Դատարկ, սընանկ ու սկերես,  
Ոչ պատահի պարտքատէրին,  
Ոչ երևայ լոյս աշխարհին»։

Ահա ձեզ աբուռի ոյժը. այս թշւառա-  
կանները ուրիշի փողեր չեն կերել, չեն թագ-  
ցրել, իրանք մեղաւոր չեն որ ծովը փոթոր-  
կեց ու նաւը խորտակւեց, իրանց ունեցա-  
ծը անգամ բոլորը տւին ու «ցիփ մեր-  
կացան»։ Այդ նոյն աբուռը ստիպեց նը-  
րանց թէ մարդկանց թէ լոյսի երեսից փախ-  
չելու \*) և նրանք փախան մերկ ու տկլոր  
հալածւած աղա Փուշից որ առաջւայ պէս մնաց  
հրապարակի վրա—թէկ ճանաչւած իբր ան-  
հոգի մէկը, անխիղճ մէկը, բայց այնուամե-  
նայնիւ մնաց հրապարակի վրա, «մարդկանց  
շարքում, և նրա ոտներն են ընկնելու նոր  
բախտ փորձողներ, կարիք ունեցողներ, դիմե-  
լու են որովհետեւ նա ոյժ է, նա փող է, այն  
իսկ փողը—որ պաշտւում է քաղաքում։

1) Թումանեանը զուր է պըպէնակին գարձ-  
րել ձայ. առաջին ըիրաւ որ խեղճ կոտրըն ընկածի  
ողորմելի, մերկ ու տկլորի տպաւորութիւն է ա-  
նում,—եիրկըորդը ոչ։

Բանաստեղծն էլ ապրելով քաղաքում,  
քաղաքի կեանքով ենթարկւել էր դրա ազ-  
դեցութեանը և ինքն էլ լաւ էր հասկացել  
դրա ոյժը, երբ անկեղծօրէն զրոյց էր ա-  
նում իրա «բարի հրեշտակի» հետ—

«Այ, գու սատանայ, Էլ կուզես խաբեր  
Մեծ-մեծ խօսքերով աչքերըս կապել.  
Այ, գու կեղծաւոր, սիրուն անվիտան.  
Ես լաւ եմ տեսնում այժըմ ամեն բան:  
Դու ինձ ես մենակ միամիտ զըսել.  
Հապա դէ խօսիր ուրիշի մօտ էր  
Այ, թէկուզ մեղ մօտ, հէնց իմ կնկանը—  
Ասա՝ թէ մենակ փողը չի բանը...»

Այս, փողի ոյժի հասկանալուց, զգա-  
լուցըն է որ բանաստեղծը սրան մի օրհներ-  
գութիւն է ձօնել—

«Փողի քըսակը, փողի քըսակը,  
Բարձրացընում է մարդու հասակը,  
Գեղեցկացնում է հըրէշ տըգեղին,  
Սըրբագրծում է գարշն ու աղտեղին:  
Նըրա ուժն է՝ որ գարձընում է լոկ  
Անասուններին յարգի ու խելօք,  
Կոյսին, զառամին մօտեցնում է իրար,  
Զարին, վաշխառւին շինում բարերար,  
Պըճնում ճակատը լիրը աւազակի,  
Կանգնեցնում արձան անվախճան փառքի:  
Նա է միշտ շարժում դատողի լեզուն,  
Նա է հասցընում աղօթքն Աստըծուն,

Նըրա վըրա է աշխարքը կանգնած,  
Նա մեր հոգին է, մեր երկրորդ Աստւածած:  
Խեղճ Մուսան հէնց որ բանաստեղծի  
այս երգը լսեց՝

«Իսկոյն հաւաքեց իր փաստ-փուսան»  
ու հեռացաւ հաւատալով որ «անսիրտ ու  
անսիրաւ» պօէտն էլ «բոլորն ուրացաւ,  
փողապաշտ դարձաւ:»

Բայց մենք զիտենք որ բանաստեղծը  
զլուկ չխոնարհացրեց, չերկրպագեց փողի  
քսակին—այլ մնաց առաջւայ պէս թէկ աղ-  
քատ բայց հապարտ և նրա այդ երգը մի օրհ-  
ներդ չէր այլ հուժկու և կծու մի երգիծա-  
բանութիւն, զօրեղ մի դատապարտութիւն  
փողի քսակին—մարդկանց այդ երկրորդ Աս-  
տուծուն:

Եւ այդ երկրորդ Աստուծու քսութիւն-  
ներից յանցանքներից ու ոճիրներից արդար  
ցասումով զայրացած բանաստեղծը որոնում  
է առաջին, իսկական Աստուծուն.—

Ա՛խ հս երանի  
Կայծակ լինէի,  
Որոտ-ճայթիւնով  
Մըռայլ ամպերից  
Ժայթքէի ըմբոստ  
Զարկէի ուժգին,  
Պատոէի խաւար

Կամարը երկնի,  
Ցոյց տայի մարդուն  
Գաղտնիքը վերին,  
Որ տեսնէր՝ այնտեղ  
Ի՞նչ բան կայ ահեղ,  
Կամ ո՞վ է նըստած  
Եւ ո՞ւր է Աստւած...

Եւ այս երգի վերջին խօսքերը ուշադիր  
ընթերցողի սչքում բանաստեղծի համ հաւա-  
տըն ու յոյսն են թէ Աստւած կայ, համ  
նրա կասկածը՝ թէ երկի Աստւած իսկի չի  
կայ էլ այնտեղ, երկնաքում:

Այսպէս ուրեմն բանաստեղծը ներկայա-  
ցրեց մեղ զիւղը իրա ժողովրդով և զրանց  
թշնամիներին — ադաթը, նախապաշարումն  
ու մնահաւատառութիւնը, ապա քաղաքը և դրա  
պաշտած թշնամուն — փողի քսակը:

#### IV ԲՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՐԴ

Թումանեանը իրա պօէմներում և լե-  
զենդներում օբյեկտիւ էր և էպիկ երբ գործը  
մարդկանց էր վերաբերում: Բայց հէնց որ  
բանը հասնում էր բնութեանը — նա՝ անկա-  
րող ծածկելու իրա սէրը և հիացմունքը այդ

բնութիւնից՝ ձանապարհից միշտ շեղւում է:  
Եւ այդ բնութիւնը նա երգել, նկարել է ոե-  
լիեփ, հիւթալի գոյներով, շունչ և հոգի ներ-  
շնչել մէջը — խօսելով և պատմելով թէ մեր  
սրտին ու հոգուն, թէ մեր ականջին, թէ մեր  
աչքերին և թէ մեր հոտառութեան:

Գիւղը — «...Հպարտ՝  
Լեռների մէջ միգապատ,  
Խոր ձորերի քարափին՝  
Զեռքը տրած ճակատին՝  
Միսէ է անում տրիւադին.  
Ի՞նչ է ուզում — չըգիտեմ...» <sup>1)</sup>

— Ասես կենդանի մարդ լինի:  
Առուն — «Զարացընի...

Դուրս է փախչում անտառից,  
Կարկաչելով վըրփրալից՝  
Խաղում կանաչ մարգերին.» <sup>2)</sup>

— Ասես երեխայ լինի:

Սարերը — «...Վէս, վիթխարի,  
Հարբած շարքերով բըռնած շուրջպարի,  
Հըսկայ շուրջպարի բըռնած երկընքում,  
Հըրճում են, ասես... մեծ հարսանքում» <sup>3)</sup>

— Ասես քէփ անող հսկաներ լինին:

Ժայռերը — «...Խորունկ նօթերը կիտած»

<sup>1)</sup> Էջ 83:

<sup>2)</sup> Էջ 84:

<sup>3)</sup> Էջ 95:

Դէմու դէմ կանգնտծ, յամառ ու անթարթ  
Հայեացքով իրար նայում են հանդարտ»:<sup>1)</sup>  
—Ասես նեղացած մարդիկ լինին:

Գետը՝ ժայռերի—«ոտքերում՝ գաղա-  
գած գալի»

Թալարւում է զիժ Դե-Բեդը մոլի,  
Խելագար թըռչում քարերի զըլլով,  
Փըրփուր է թըռում անզուսպ երախով,  
Թըռում ու զարկում ժեռուտ ափերին,  
Փընտրում է ծաղկած ափերը հին-հին,  
Ու գոռում զիժ-զիժ.

—Վաշ-վիշը, վաշ-վիշը...»<sup>2)</sup>

Ամպերը—«Դանդաղ ուղտերի նրման  
Նոր են ջուր խըմած ձորից բարձրանում.»

Մի խօսքով համայն բնութիւնը նրան  
թւացել է կենդանի:

Նրան պատահել են վտակն ու անտառը  
և ժայռը միատեղ ևնա լսել է մի «համերգ»—

«Վլտակը ժայռից ներքե է թըռչում,  
Թափ առած ընկնում քարերի զըլլին,  
Զարկում աւազին, շաչում է, ճըշում,  
Ճըշում անհանգիստ, փըրփուրը բերնին:  
Ինչպէս ծերունին, ձայնով պառաւած,  
Զայնակցում է ժիր թոռնիկի երգին,

1) Էջ—131.

2) Լուռ զաւառում՝ վաշ և վիշ—ափոսանքի և  
ցարի բացականչութիւններ են:

Այնպէս է ծերուկ անտառը կամաց  
Արձագանք տալի ջըրի աղմուկին:

Սակայն բընութեան զըւարթ համերգի  
Ունկընդիրն անխօս, յաւիտենական,  
Ժայռը մըտախոն իր մըռայլ մըտքի  
Ետեկից ընկած լըսում է նըրան:

Բանաստեղծի լսածը սակայն մի հա-  
մերգ չէր—այլ մի զուէտ: Նա համերգ էր  
լսել մի ուրիշ անզամ, մի համերգ—իբրև  
Աստուծուն փառաբանութեան մի ճառ միա-  
ժամանակ և երկնքի, և երկրի և ամեն մի  
շնչաւորի և անշունչի.—

«Ամոան գիշերայ երկինքըն աստղալի  
իւր հսկայական վրանի ներքոյ  
Գրկած շարքերը բարձր լեռների՝  
Պատմում է երկրին մեծութիւնն Աստծոյ:

Եւ բարիքներով լցւած, լիացած  
Երկիրն ունկնդիր երկընքի ճառին,  
Քնելուց առաջ, խոնարհ, երկիւզած  
Փառաբանում է մեծազօր Տէրին:  
Եւ փառք են տալիս իմ շուրջը բոլոր,  
Ամեն մի տերի, ամեն շնչաւոր...»<sup>1)</sup>

Բանաստեղծը ոչ միայն բնութիւնն է  
ամեն վայրկեան մարդկայնացնում, այլ և  
հակառակն է անում շարունակ: Մարդու ար-  
տաքինը, զգացմունքը, գաղափարը, գործե-

1) Այս երգը Թումանեանը չի զետեղել ներկայ  
հատորում:

ըր աւելի ոէլիեֆ դարձնելու համար վերա-  
ծում է բնութեան պատկերների:

Ահա չօբան Սաքօն—

«Ո՞սց է մեկնըւել: Ասես ահազին  
կաղնըրի լինի անտառում ընկած:  
Իսկ եթէ տեղից վեր կացաւ յանկարծ,  
Ու բիրտ, վայրենի կանգնեց, ինչպէս սար,  
Այնժամ կիմանաս, թէ ընչի համար...»  
Ահա ձեզ երկու պատկեր. մէկը մի ծե-  
րունի թագաւորի, որի միակ միտքը իրա մի-  
ակ աղջկայ համար բախտ գտնեն է, միւսը  
—այդ աղջկայ—որն իրա համար երազում  
է մի անուշ բախտ.—

«Հայրը ինչպէս մըռայլ մի ամպ,  
Աղջիկն անուշ մի լուսին,  
Ամպ ու լուսին իրար փարւած՝  
Դուրս են գալի միասին:  
Ահա ձեզ պատկերացումն մի երգի. —  
«Բոյր ու զեփիւռ ես կուզէի  
Եւ արշալոյս ոսկէվառ,  
Որ մի պայծառ երդ հիւսէի  
Ու երդէի քեզ համար...»:

Բոյրը նրա համար է ուզում որ երգը  
դարձնի հոտաւէտ, անուշանոտ, զեփիւռը նրա  
համար—որ երգը լինի մեղմ, քնքոյշ, ոսկե-  
վառ արշալոյսը նրա համար—որ երգը լինի  
առաւօտայ առաջին լոյսի պէս պայծառ ու  
թարմ և օր ու կեանք խոստացող: Այս հրա-

շալի պատկերաւորութիւնով բանաստեղծը  
միաժամանակ զրգուում է և ձեր հոտա-  
ռութիւնը և ձեր շոշափելիքը և ձեր տե-  
սողութիւնը:

Պատկերացումն բեկւած սիրոյ.—

«Ասում են՝ ուռին

Աղջիկ էր ինձ պէս,

Մընում էր եարին,

Ու չեկաւ նա տես:

Խեղճը գողալով՝

Անյուս կըռացաւ,

Դարդից չորացաւ,

Ուսենի դարձաւ:

Զըրերի վըրա

Գլուխը կախած

Դեռ գողում է նա

Ու լալիս կամաց,

Ու ամբողջ տարին

Մի միտք է անում—

Թէ եարը եարին

Ո՞նց է մոռանում...»

Սա մի շքեղ ալեգորիա է և այդ ասում  
են՝ աւանդութիւն չի—այլ Անուշը բանաս-  
տեղծիցն է իմացել որ ուռին աղջիկ է եղել:

Պատկերացումն մի գաղափարի—

«Վաղուց թողած բարձր ու կանաչ

Գաշը իրենց հանգըստութեան,

Երկու սե ամպ հողմի առաջ

Գընում էին հալածական:

Հողմը սակայն չար հոսանքով  
Բաժանել չէր կարողանում,  
Որքան նըրանց լայն երկընքով  
Դէս ու դէն էր քըռում, տանում:  
Եւ անդադար գընում էին  
Քըշւած հողմի կատաղութեամբ,  
Իրար կըպած ու միասին  
Երկու սև ամպ, երկու սև ամպ...»  
Երկնքում հողմի կատաղութեամբ քշւող  
Երկու իրար կըպած սև ամպերը ասես երկըն  
Վրա հալածւող երկու մտերիմ ընկեր լինեն  
—սրանց էլ ոչ մի հալածանք չի կարող բա-  
ժանել:

Պատկերներով, կերպարանքներով բա-  
նաստեղծի նկարելու այս շնորհքն ու ձիր-  
քըն արդիւնք են նրա երեսակայութեան և  
մենք այստեղ առաջ կըերենք այդ երեսակա-  
յութեան բարձր աստիճանի—ֆանտազիայի  
մի օրինակ (որոնք ի դէպ է ասել Թումա-  
նեանի մօտ շատ չեն) —

«Բաղմած լուսնի նուրբ շողերին.  
Հովի թեմին՝ թլուչելով՝  
Փէրիները սարի գըլմին  
Հաւաքւեցին գիշերով:  
Ու նրանց հետ ցող-արցունքով  
Լըցւած սըրտերն ու աշեր՝<sup>1)</sup>

<sup>1)</sup> Փողովրդի բերանում ծաղկի սիրտն ու աշ-  
քը նրա միջի մամն է, կենդրոնը.

Սարի ծաղկունք տըխուր սիւգով  
Հառաչեցին էն գիշեր...  
Ու հէնց շողաց ցոլքն արկի՝—  
Անտես, անհետ չըքացան:  
Խոր սուզւեցին ակն աղբիւրի,  
Մըտան կաղնին հաստաբուն,  
Ու լեռնային վըտակների  
Ալիքները պազպաջուն:»

Եւ վեհ ու հրաշալի բնութիւնը թէկ  
հիացում է պատճառում բանաստեղծին—  
բայց և սրա սրտի ու հոգու մէջ առաջ է  
բերում մի նուրբ, մելամաղձոտ տիրութիւն,  
որ այդ բնութիւնը պիտի մնայ, իսկ ինքը  
անցնի—գնայ: Եւ բանաստեղծը երգել է մի  
տխուր և սրտառուշ էլէզիա:—

«Է՞յ, աստղեր, աստղեր,  
Երկնքի աչքեր,  
Որ այդպէս վառ-վառ  
Ժըպտում էք պայծառ,  
Ժըպտում էիք դուք,  
Երբ ես, գեռ մանուկ,  
Աշխոյժ ու կայտառ,  
Զնդ նըման պայծառ,  
Թըրվըռում էի  
Ու ցաւ չունէի:  
Ժըպտում էք այսօր  
Երբ թոյլ ու անզօր,  
Կորած յոյսերիս

Կըսկիծն եմ լալիս...  
Կըժպտաք նաև  
Շիրիմիս վերև...»

Մի բնական թախիծ ամեն մտածող հոգու։ Այդ մեծ ու վեհափառ բնութիւնը կայ ու կըմայ. բայց որչափ գեղեցիկ, նոյնչափ էլ անտարբեր դէպի մարդկային գոյութիւնը։

### V. ԿԵՍՆՔ ԵՒ ՄԱՀ

Այդ ցաւը ու թախիծը տասնապատիկ, հազարապատիկ է լինում մանաւանդ երբ գեղեցիկ ու վեհափառ բնութեան այդ սառն անտարբերութիւնը մենք տեսնում ենք և այն ժամանակ, երբ կորցնում ենք մեզ թանգագին էակներին և ըմբռնում մեր անձարութիւնը։

Եւ այդ մեծ ցաւի, կորստի, անտարբերութեան ու անձարութեան դրաման է և ողբերգութիւնը — «Դէպի անհունը»։

Կեանքը անցնում է երազի պէս, որից մարդս այն բօպէին է միայն զարթնում, երբ մահը կամ դռանն է հասել կամ իրա անեմքը արել պրծել է։

Մի նոր ամուսնացած մարդ երազում տեսնում է թէ ինչպէս իրա կնօջ հետ խա-

դալիս սա յանկարծ աղաւնի դառաւ ու ձեռքիցը դուրս թռաւ.

«Հընչում էր փըրփըռւն վըտակն արծաթի, Արկը խաղում պայծառ կապոյտում... Առանց հոգսերի ու առանց վըշտի Խաղում էինք մենք այն երազ հովտում... . . . Յանկարծ նա ճըշաց, Զեռըումը դարձաւ ճերմակ աղաւնի, Ու թեին արաւ, ու թըռաւ, գընաց, Գընաց ճախրելով այն երազ հովտում, Սուզեց, չըքացաւ պայծառ կապոյտում...».

Այդ երազը կեանքն էր։

Եւ երազից վեր թուչելը ու իրա կնոջ յանկարծակի մահն իմանալը մէկ է լինում։ Մահ։

Մի յանկարծակի, մի անակնկալ բօպէին մի անյայտ, անհասանելի, անմեկնելի, անխուսափելի մի ոյժ թէ մի կամք բաժանում էր այդ զոյգը։

Այս մարդը երեխայ չի. նա շատ մահեր էր տեսել և նրանք նրա աչքում բնական էին. միայն այս մէկն էր որ անքնական է թւում, անխիղճ ու անողոք է թւում... Այդ կնօջը, այսինքն այդ կնօջ արդէն դիակը դագաղ են դնում, ծաղիկներով զարդարում, գերեզմանատուն տանում, շարականներ երգում, փոս իջեցնում և այդ կի-

Նը մնում է դիակ և չի գարթնում: Նա մեռաւ: Նա էլ չկայ: Նա ետ չի գալու և մարդը նրան զուր է սպասում:

Այդ մի քանի օրւայ ամեն մի բողէն այս մնացող մարդու համար մի մի յաւիտենականութիւն էին և ամեն մի բողէն ցաւի մի դրամա:

Այդ մնացող մարդը միայն այդ բողէն է որ ապրեց, գիտակցեց իրա ինչութիւնը տիեզերքի մէջ—տակն ու վրա լինելով ամբողջ էութեամբ:

Եւ այս պօէմը մի չոր ու ցամաք փիփսոփյութիւն չի մահի ու կեանքի շուրջը, սա ցաւի մի ամբողջ կեանք է, սիրոյ կակիծ, կարւած սիրոյ, վերջ դրած սիրոյ—յանկարծակի և վաղաժամ:

«Մի անհուն ցաւի մըրմուսի նըման  
Ծաւալւում էին զանգերը թաղման,  
Ու ժամի ծըխոտ կամարների տակ  
Կանգնած էր արդէն տըխուր պատարագ.  
Տըխուր պատարագ, տըխուր մեղեղիք,  
Տըխուր աղօթքներ ու տիսուր մարդիկ,  
Մէջ տեղը ճերմակ դագաղը նրա . . .

. . . Ասանց մըտքերի  
Կանգնած էի ես խորտակւած ու պաղ,  
Հուռ էր: Հոգեոր երգերը մենակ  
Ծաւալւում էին վըսեմ ու խաղաղ»:

Եւ այդ խորտակւած մարդը իրա կեանքի այդ խորտակւած բօղէին ուշք դառած ազահութեամբ ականջ էր զնում այդ երգերին և գուցէ առաջին անդամն էր, որ ուզում էր ըմբռնել դրանց հոգին ու խորհուրդը ամբողջապէս:

Եւ բանսաստեղծը ներշնչւելով մեր հոգեոր շարականների հոգով—տալիս է իրա շարականը նոյն հոգով ու ջերմութեամբ, նոյն քաղցրութեամբ ու վեհութեամբ, նոյն երաժշտականութեամբ: —

«Այս անցաւոր երկրի վըրա  
Լըցան օրերն պանդըխտութեան,  
Երկնասոլլաց գընում է նա,  
Հազած մարմին անապական,  
Անմահացած մահկանացուն՝  
Միանալու իր Աստըծուն:

. . . . .  
Այս աշխարհում անտըխրական  
Արդարքն ապրում են յաւիտեան.  
Եօթնաստեղեան լոյս խորանում,  
Ուր ցաւ չը կայ, ոչ հեծութիւն,  
Ընտրեալ հոգիքն ուրախանում,  
Խայտում են միշտ անվերջ, անհուն  
Բերկրանքներով յարազըւարձ,  
Աստծոյ զըւարթ աչքի առաջ:

. . . . .  
Նըրա առջև պաղատաւոր

Նըրանց համար, որ թողեցին.  
 Ու իջնում են, մըխիթարում  
 Մեղ տըրտմալի այս աշխարհում...»  
 «անդերձեալ կեանքում երանութիւն  
 խոստացող այս հոգեոր շարականները կեն-  
 դանի մնացած ու խորտակւած մարդու հոգում  
 զարթեցրին մի ուրիշ աշխարհ, որ նրան իրա  
 կեանքի այդ խորտակւած բօպէին շատ էր  
 դուրեկան, շատ էր քաղցր:—  
 «...երջանիկ մի ուրիշ աշխարհ,  
 Այս այտ ու հեռու, անձանօթ, օտար...  
 Եւ այն աշխարհը հըրաշալի էր.  
 Ոչ սուդ կար այնտեղ, ոչ վայելը, ոչ սէր.  
 Ոչ կարելի էր կորցցնել մի բան  
 Եւ ոչ ուսենալ քաղց ազանութեան.  
 Որպէս գերեզման և ուսայնութիւն՝  
 Լուս էր ու դատարկ, անփառք ու անհուն.  
 Որպէս հայացքը մեռելի աչքի՝  
 Մի միտք ունէր միշտ առանց յուզմունքի,  
 Հողեղէն մարդուն անյայտ խորհըրդով  
 Յաւիտեան սառած, խաղաղ, անվրդով...  
 Ու անշարժ կանգնած, դալուկ ու լըռիկ,  
 Ստւերնէր էին, անմարմին մարդիկ,  
 Տըժգոյն, անարկ, աղօտ լուսի մէջ  
 Աղօթում էին անձայն ու անվերջ,  
 Աղօթքն էլ սակայն ոչինչ չէր խընդրում,  
 Ոչ աղատութիւն, ոչ մահ, ոչ խընդում...»  
 Այդ ի՞նչպէս պատահեց որ այս խոր-

տակւած մարդը՝ «թովւած, կախարդւած»  
 հանդերձեալ կեանքի երգով — նրա «վշտոտ  
 հոգին» վերացաւ, թուաւ գէպի այս նոր, եր-  
 շանիկ և օտար աշխարհը:  
 Որովհետու հանդերձեալ կեանքը միայն  
 խոստացւում է, գեռ պէտք է շարունակել ապ-  
 րել վշտոտ հոգով, մեռնել ու ապա թէ նրան  
 ճաշակել, եթէ միայն նա կայ: Այն մէկը — ի-  
 րականը — որ կար, նրան վերջ ի վերջոյ ան-  
 պատմելի վիշտ պատճառեց, այնպէս որ նա  
 մոռացաւ իրա ապրած երջանիկ բօպէները:  
 Իսկ այս նոր երջանիկ աշխարհը նրա վշտոտ  
 հոգուն դուր էր գալիս, քաղցր էր — որովհետեւ  
 սու հէնց այն կեանքն էր, նոր և օտար կեան-  
 քը — ուր և որով ապրում էր արդէն այս  
 բեկւած մարդը. նա՝ էլ կորցնելու բան չու-  
 նի, նա զրկւեց իրա ամենաթանգագին ըն-  
 կեր — էակից և էլ նոր բան չի ուզում, նոր  
 իղձ չունի. նա լսում է, բայց բան չի հաս-  
 կանում... նա բեկւած է, նա լքած է, նա  
 ոչինչ է. մարդիկնրա աչքում ստւերնէր են, նա  
 ոչ աղատութիւն է խնդրում, ոչ մահ, ոչ խըն-  
 դում: Եւ «Դէպի Անհունն» էլ մի գեղեցիկ  
 ստեղծագործութիւն է նուիրած մահին ու  
 կեանքին, կամ աւելի ուղիղը՝ միմիայն սիրոց  
 որ իրար ձեռից են խլում կեանքն ու մահը

և տեղիք տալիս մի մեծ դրամայի և ողբեր-  
գութեան մարդկային սիրակարօտ սրտի:

VI. УБІГ

Սէր և սիրոյ գաղափարն է կամեցել  
ներկայացնել հայ ժողովուրդը իրա մի քանի  
այլաբանական աւանդութիւններով. մէկի  
մէջ, օրինակի համար, պատմում է թէ «ուր  
որ ճրագ, ուր որ կրակ» Փարւանա կոչւող  
թիթեռները մէջն են ընկնում այրւում  
Մի ուրիշի մէջ պատմում է թէ Փարւա-  
նա արքայի աղջկել շատ սպասեց ու ոչ  
ոքից անշէջ հուր չստանալով—շատ արտա-  
սուք թափեց որ ծով դառաւ ու նրան ծած-  
կեց և այդ ծովը հիմա էլ գեռ Փարւանա է  
կոչւում:

Այդ երկու աւանդութիւնն էլ հասել  
են բանաստեղծի ականչին և նա վեցցել է  
միացրել դրանց, կեանք ու հոգի ներշնչել  
նրանց ու ստեղծել մի գեղեցիկ Փարւանա՝  
պալատա-ասպետական մի շրջանակում՝ ար-  
քունիքներով, ամրոցներով, դրանիկներով ու  
նաժիշտներով, զէնք ու զրահով, պայքարնե-

ըով ու ձիարշաւաներով։ Մի իսկական դրամա  
ծերունի թագաւորի համար, որ չնայելով  
իրա բարձր կոչումին ու գահին, ամպի պէս  
մռայլ է, որ չի կարենում իրա միակ աղջկան  
բախտաւոր դարձնել։ Դրամա են թագաւո-  
րի աղջկայ համար, անվերջ դրամա այն քօ-  
պէները, այն ժամերը, օրերը ու տարիները,  
երբ նա կսկիծով և ազահութեամբ սպա-  
սում է մէկն ու մէկից անշէջ հուր ստա-  
նայու։

—«Հայրիկ, ինչու ետ չըդարձան  
էն բացերը սիլատենչ.

Միթէ, հայրիկ, ինձ մոռացան,  
ել չեն բերի հուրն անշէջ:

—Ուր է, հայրիկ, Եղբ կըդայ նա,  
Ապահո թռասձ ձիաւոր:

Միշտ երազում ես տեսնում եմ  
ին հեռասին ապագայ,

Հուր կարօտով թըռած իմ դէմ,  
Խոսանում է... ու ընկայ:

Հայրիկ, հայրիկ, միթէ չըկայ  
իս աշխարհում անշէջ հուր,  
Թառամում է սիրտը ահա,  
Պաղ է այս կեանքն ու տըխուր...»  
Հայ աղջկայ ակնկալած, սիրակարօտ  
սրտով ուզած սիրոյ սրբազն անշէջ հուրը

չգտնուեց հայոց երկրում — որովհետև նա չկար հայ կտրիճների սրտերում և դրա համար էլ հայ աղջկայ սիրտը թառամեց, աչքը ծով դառաւ արտասուքից և այդ ծովը ամեն բան թաղեց իրա տակը՝ և արքային, և պատրը, և աղջկան . . .

Եւ Փարւանան Թումանեանի գեղեցիկ ստեղծագործութիւններից մէկն է՝ և սրտալի և սրտաճմիկ — մնալով գաղափարային:

Նոյնը չենք կարողանում ասել «Ախթամարի» մասին:

Մենք հակամէտ ենք կարծելու, որ այս աւանդութեան մէջ հայ ժողովուրդը չի հրապուրւել միայն բառախաղութեամբ (Ա՛խ, Թամար) այլ կամեցել է ներկայացնել սիրու գաղափարը: Իբրև հաստատութիւն մեր ենթադրութեան կարող է ծառայել հէնց թէկուզ միայն վառող կրակը — սիրոյ էմբլեմը, որ մատնում և յայտարարում է աշխարհին այդ դոյգի սէրը:

Եւ այս տեսակէտից մենք կարծում ենք որ այդ աւանդութիւնը լրիւ չի հասել մեր բանաստեղին, որ նա առանց մշակելու կատարել է մի շտապ և պակասաւոր գործ — չափազանց հաւատարիմ մնալով իրա լսած վարեանտին և դրա համար էլ այդ պօէմը

մի թոյլ և անորոշ տպաւորութիւն է անում, իբրև մի հասարակ սիրային արկածի պատմութիւն: Այժմեան պօէմների մէջ — Ախթամարը անձնւիրութեամբ չի ապացուցանում իրա սէրը. չար մարդիկն են թէ կղզու ջահել աղերքն են նրա վառած կրակը հանգցնում — Թամարը մնում է չէզոք, առանց բողոքի, ստերացած, կորած: Միւս կողմից ծով ընկնող ջահիկ տղան էլ անձնուիրութեամբ չի ապացուցանում իրա սէրը. նա ծովին ընկաւ այն ժամանակ, երբ կրակը արդէն վառած էր և ոչ այն ժամանակ, երբ հանգցը էր:

Ուշադրութեան միանգամայն արժանի է որ ժողովրդական երգերում՝ ջանգիւլումներում, բայաթիներում սէր է երգում, սիրոյ պահանջ է յայտնում և հայ աղջիկը, եթէ ոչ աւելի մեծ չափով, յամենայն գէպս տղամարդուց ոչ պակաս: Ուզում ենք ասել որ ժողովրդական երգերում սիրոյ վերաբերմամբ հայ աղջիկը կամ կինը, բացակայ չի, չէզոք չի, այլ պահանջող, ձայն բարձրացնող: Եւ Թումանեանն էլ, երբ «Անուշի» մէջ փունջ փունջ աղջկերանց, կժերը ուսած ջրի է ուղարկում, նրանց բերանը երգեր է գնում, որոնք մատնում, պարզում,

բաց են անում նըանց սիրակարօտ սըբաերը՝  
—«Ամպի աակից ջուր է գալի,  
Դօշ է տալի, փըրփըրուժ.  
Են ում եարն է նըստած լալի  
Հօնդուր-հօնդուր էն սարում:  
Ա՛յ պաղ ջըրեր, զուլալ ջըրեր,  
Որ գալիս էք սարերից,  
Գալիս՝ անցնում հանդ ու չօլեր,  
Եարս էլ խըմեց էդ ջըրից:  
Եարար խմեց, եարար հովցաւ  
Վառած սիրտը էն եարի,  
Եարար հովցաւ, եարար անցաւ  
Անքուն ցաւը ջիգարի . . .  
—Աղջի, քու եարն եկաւ անցաւ,  
Վառած, տարւած քու սիրով,  
Երւած ջիգեարն՝ եկաւ անցաւ,  
Զըհովցաւ պաղ ջըրով...»<sup>1)</sup>

Այսպէս ուրեմն թումանեանը իբրև գիւղացի և ժողովրդի զաւակ—իրեն երկերի բովանդակութեամբ ժողովրդական է, նըաւերի երգիչն է: Եւ իրա լեզուն էլ—ժողովրդական է, կենդանի, և հարազատ հայկական համուտով,—և ի դէպ է ասել նըա երգերն էլ քաղցրանչիւն են, երբեմն վսեմ, պաղատաւոր՝ ասես շարական, երբեմն կտրուկ և շում արևմտեան աղգերի մօտ:

ազդու՝ ասես անէծք, երբեմն չարաճընի, սահուն, և միշտ երաժշտական:

### VIII. ԲԱՆԱՍԵՂԾԻ ՍԵՐԲ

Զափազանց քիչ կը գտնուի բանաստեղծութեամբ չլինի և սէրը: Եւ ընդհակառակը՝ կան շատ բանաստեղծներ որ երգել են միմիայն սէրը: Եւ եթէ մեզանում, մանաւանդ ինստելլիգենտ կոչւած շըջանում, սիրոյ երգը հալածւած է—դա լոկ կեղծիքի նշան է: Բոլոր դարերի բոլոր ազգերի բոլոր բանաստեղծները երգել են կնօջ սէրը:

Սէր են երգել և բոլոր ժողովուրդները՝ և նա կերգւի քանի որ աշխարք կլինի և աշխարքի վրա մարդկային սիրտ, և ով հակառակ է սիրոյ երգին նա համ չոր է, համ շար:

Թումանեանը սկսել է սէր երգել 12—13 հասակից.—

«Հոգուս հատոր,

Սըրտիս կըտոր,

Դասիս համար

Դու մի հոգար.

Թէ կան դասեր,

Կայ նաև սէր,

Եւ ինչ զարմանք,

Իմ աղաւնեակ,  
Որ կենդանի  
Մի պատանի  
Սէրը սըրտում  
Դաս է սերտում»: (1881 կամ 82թ.)<sup>1)</sup>  
Եյունետելնա սիրւել է և մերժել.—  
«Եի որոնիր՝ մի ժամանակ  
Արհամարածդ՝ այս կրծքի տակ,  
Հառաչանքով դուրս թըռու նա  
Ու դատարկ է տեղը հիմա...» (1890 թ.)<sup>3)</sup>  
Նա սիրել է և տանջւել.—  
«Ասա, իմ սիրուն,  
Դու ես այն ուրուն,  
Որ զըրկում է ինձ  
Թիշերը քընից...» (1891 թ.)<sup>2)</sup>  
Նա սիրել է և սիրւել.—  
Ես սիրել եմ վարդը տըժդոյն  
Սիրոց տանջւած այտերի,  
Մելամազուտ խաղաղութիւն  
Զոյգ սերակ աչքերի...» (1892 թ.)<sup>4)</sup>  
Նա սիրել է և կարօտել.—  
«Սըրտիս թագուհի,  
Կարօտել եմ քեզ.  
Աւս, ինչ կըլինի  
Յանկարծ յայտնըւես...» (1892 թ.)<sup>5)</sup>

- <sup>1)</sup> Այս երգը չկայ ներկայհատորում:  
<sup>2)</sup> Էջ 15—«Եի որոնիր»:  
<sup>3)</sup> Էջ 19—«Ուրու»:  
<sup>4)</sup> Էջ 20—«Իմ սէրը»:  
<sup>5)</sup> Էջ 21—«Կարօտ»:

Նա սիրել է և խաբւել.—  
«Անա պօէտն էլ, պատրանքով հարբած,  
Գերւեց մի անգամ ժըպտուն աչքերի,  
Ու որբան տանջւեց, տառապեց խարւած,  
Ու որբան սըրտում գանգատներ ունի...»  
(1894 թ.)<sup>1)</sup>

Նա սիրել է և մերժել.—  
«Դու քո ճամբէն գընա, քոյլիկ,  
Եւ թող լինի նա պայծառ,  
Ինձ մի ժըպտար, ինձ մի սիրիր,  
Ես ընկեր չեմ քեզ համար (1902 թ.)<sup>2)</sup>

Անձնական սիրոյ երգը, աստիճան առ  
աստիճան, տարիների ընթացքով, պակա-  
սում է, թուլանում, ցամաքում... Ընթերցո-  
ղը դիւրութիւն կունենար մեր ասածը տե-  
ղըն ու տեղը ստուգելու... եթէ ներկայ հա-  
տորը մի լրիւ ժողովածու լինէր թումանեանի  
երգերի ժամանակագրական կարգով:

Եւ այս սիրային երգերը թէկ ուրախ,  
Քայց արդէն խակ համակւած են մի նուրբ  
տիսրութեամբ:

### VIII. ՎԻՇՏ ՈՒ ԹԱԽԻԾ

Եւ ահա սիրոյ յոյզերի այս գամմային կից

<sup>1)</sup> Էջ 26—«Ժպտուն աչքեր»:

<sup>2)</sup> Էջ 38—«Դու ճամբէն զնա»:

հնչում է արդէն, իբրև դիսօնանս—մի նոր լար—տիսրութեան լար—որ աստիճան առ աստիճան տարիների ընթացքով զօրեղանում է և ուժեղանում:

Նա յիշում է, և «գեռ նոր էր այն», թէ ինչպէս իրա «հսկայ պապերն ու գիւղի տէրերը» օրհնում էին իրան ու իրա դասընկերներին՝ «ապրէք երեխէք, —բայց մեզ պէս չ'ապրէք»... ասելով:

«...ժամանակ անցաւ, նրանք էլ անցան, ջրւարթ երգերը վըշտալի դարձան... Խաղաղութիւն ձեզ, մեր անբախտ պապեր Զեղ տանջող ցաւը մեզ էլ է պատել. Այժմ, տիսրութեան թէ քէֆի ժամին, Մենք էլ օրհնելիս մեր զաւակներին՝ Զեր խօսքն ենք ասում—Ապրէք, երեխէք, Բայց մեզ պէս չապրէք...» 1887 թ.<sup>1)</sup>

Նա յիշում է, և «գեռ նոր էր այն», որ ինքը մեն մենակ, զիշեր ժամանակ, աստղերի հետ զրոյց անելիո, նրանց ասում էր—

«Շողում էք և արդ Երբ երիտասարդ Անհուն յոյսերով Խանդավառ սիրով

<sup>1)</sup> Էջ 12—«Հին օրհնութիւն»:

Եւ միշտ ուշառու  
Նայում եմ հեռու...»  
Իսկ հիմա, հազիւ մի քանի տարուց  
յետոյ—

«Ճըպտում էք այսօր,  
Երբ թոյլ և անզօր,  
Կորած յոյսերիս  
Կըսկիծն եմ լալիս...<sup>1)</sup>  
Առաջւայ սիրոյ երգերին էլի դիսօնանս, Երբ նա դիմում է իրա հայրենի կօռու սարերին ու ձորերին—

«Զորեր, այ ձորեր, սեւ, լայնարերան,  
Սըրտիս այս խորունկ վէրբերի նըման,  
Աստծու հարւածի հետքերն էք դուք էլ,  
Ձեզ մօտ եմ զալիս, ուղում եմ երգել:  
Դուք էլ խօսեցէք, դուք էլ պատմեցէք,  
Ձեր անդունդներով եկէք չափեցէք,  
Դուք էլ էք, տեսնեմ, այնքան մեծ ու խոր չոգուս անյատակ թախիծն է ինչ որ...  
1890<sup>2)</sup>

Էլի դիսօնանս, Երբ նա սիրել կամենալով անդամ—բացականչում է.—

«Ինձ մի խընդրիր, ես չեմ երգի  
Իմ տիսրութիւնն ահազին,  
Աղեկըտուր նորա ձայնից  
Կըսորտակւի քո հոգին...»

<sup>1)</sup> Էջ 15—«Էյ, աստղեր»:

<sup>2)</sup> Էջ 8—«Նախերգանք»:

Ո՞չ, քեզ համար այսպիսի երդ  
Երգելու չեմ ես երբէք:

Ես երգեցի սարի վըրա  
Ու չորացան խոտ ու վարդ,  
Անապատ է այնտեղ հիմա,  
Սեւ, ամայի անապատ:  
Հառաչանքից այրւոծ սարում  
Էլ ծաղիկ չի դալարում.

• • • • •  
«...Իմ սիրու բըռնած են դեռ  
Հուր հառաչանք, սև գիշեր» (1892թ.)<sup>1)</sup>  
Կամ էլլ՝—

Այս խաւար, ճընշող, ցուրտ մըթնոլորտում  
Հանդիառ չեն, ընկեր, նաև իմ հոգում  
Իմ վեհ ցընորքներն, իմ տենչերն աննենդ.  
Նոյնպէս հալածւած՝ նըրանք էլ երբէք  
Չեն կարողանում գըտնել ապաստան,  
Երկընքի ցըրւած ամպերի նման» (1892թ.)<sup>2)</sup>

Այս ի՞նչ վէրքերի մասին է ակնարկում  
բանաստեղծը—վէրքերի որ Լոռու ձորերի  
նման՝ «սև, խորունկ և լայնաբերան են ու  
անյատակ»:

Այս ի՞նչ հուր հառաչանք, է որ սարի  
խոտն ու վարդ այրել ու տեղը ամայի  
անապատ է դարձրել:

Այս ի՞նչ ցուրտ ու ճնշող մթնոլորտի

1) Էջ 23—«Իմ երգը»,

2) Էջ 22—«Վատ օրեր»:

մասին է ասում և ակնարկում:

Եւնա չասաց ու չյայտնեց էութիւնը ոչ  
իրա հառաչանքների ու վէրքերի, ոչ էլ ցուրտ  
ու ճնշող մթնոլորդի—չյայտնեց կարծելով  
Երկի թէ իրան չպիտի հասկանան մարդիկ,  
որոնք այս կեանքում քաղաքավարութիւնից  
թէ ինչից գրդած միայն ժպտում են:

Եւ որովհետեւ պէտք էր ապրել ուրիշ-  
ների ապրած կեանքով, ուստի նա էլ յար-  
մարւելով մարդկանց՝ ժպտում էր և ինքը.—

«Ահա պօչտն էլ՝ տառապած մի մարդ  
Որ սըրտում այնքան գանգաներ ունի,  
Բայց յաճախ այնպէս ժըպտում է զըւարթ,  
Ասես թէ քեզնից բախտաւոր լինի, (1894թ.)

Վրա հասած 95—96 թւականների կո-  
տորածի ժամանակ թումանեանը ոչինչ չը-  
երգեց:

Եւ ահա 1897 թ. սկսւում է այսպէս.—

«Ա՛խ, մի ժամանակ, և դեռ նոր էր այն,  
Մայրական գիրկ էր աշխարքն ինձ համար,  
Հըրճանքը սըրտիս չէր թըւում ունայն

Ե՞ն, անցաւ, զընաց, և ցնողք, և սէր,

Եւ ոյժ, և եռանդ—կորաւ՝ ինչ որ կար,  
Եկան սև օրեր ու ծանըլը հոգսեր» (1897թ.)<sup>1)</sup>  
Եւ բանաստեղծի կեանքի օրերը դարձ-  
րին «տաղտակալի ու երկար զիշեր»:  
Նա ետ է նայում և տեսնում թէ ինչ-  
պէս իրա անցած կեանքն ու հին տարին—  
«Երկու անգօր ծերի նըման,  
Զըրոյց տալով գնում էին  
Դէպի աշխարհն յաւերժական:  
Մին ասում էր.—Ես ունէի  
Թարմ ու բուրեան ծաղիկնէր,  
Ու բոլորը մարդկանց տըւի  
Գարնան զըրկովն առատարեր:  
Միւսն ասում էր.—Ես ունէի  
Շատ լզգացմունք ու կորով,  
Ես էլ ամբողջ նըրանց տըւի  
Սիրանըէր երգերով:  
Մինն ասում էր.—Ես թողեցի  
Չըմնու ու սեւ էն հովտում,  
Միւսն ասում էր.—Ես՝ թախծալի  
Մի սիրտ անյոյս ու տըրտում:  
Մինը ասաւ.—Բայց կըծաղկի  
Էն հովիտը նորից նոր,  
Միւսը այստեղ ոչինչ չասաւ  
Ու զընում էր զըլիսիկոր...» (1897թ.)<sup>2)</sup>  
Այդ «անգօր ծերուկը» բանաստեղծի  
վիշտն է որ հիմա տիրաբար բոնել է սիրոյ

1) Էջ 30—«Երկար զիշերներ»:

2) Էջ 28—«Անդարձ ճամբորդներ»:

տեղը, դառել է բանաստեղծի անբաժան ըն-  
կերը, նրան բաց չի թողնում, նրա մտերիմն  
է դառել, միշտ հետն է և ամենուրեք ու-  
ղեկցում է նրան ցերեկ և զիշեր.

«Տըխուր գիշեր, ալբանում գիշեր,  
Վիշտո ու ես ենք արթուն մենակ  
Եւ ուղում ենք մի լաւ յիշեր,  
Թէ որտեղից իրար գըտանը:

—Ասա, իմ վիշտ, իմ սև թախիծ

Այ անբաժան կեանքիս ընկեր.

Դու ո՞ր օրից կամ ո՞րտեղից,

Ի՞նչ գէպօվկ ես ինձ հետ ընկել...» (1898թ.)<sup>1)</sup>

Պատասխանում է թէ չի պատասխա-  
նում—բայց թէ կայ և մնում է պինդ նը-  
ստած բանաստեղծի սրտի և հոգու խորքում:  
Նրանից ազատւելու, թէթեռութիւն ստա-  
նալու թէ միիթարութիւն՝ բանաստեղծը դի-  
մում է սաղմուներին և երգում տրտու-  
թեան մի տրտում և թախծալի էլէգիս. —

«Աստուած, ինչպէս ծուխ օրերը անցան,

Ուկերքըս, ինչպէս խըսիւ, չորացան,

Սիրտըս ցամաքեց, ընկայ խոտի պէս,

Ճամբէս մոռացայ ահագին վլշտէս:

Հացըս նախատինքն եղաւ օտարի,

Հանգիստըս ճամբում հալածանքների,

Լըսեցի ցերեկն աղաղակ ու բօթ,

1) Էջ 33—«Տըխուր գիշեր»:

Գիշերը լացի մինչև առաւօտ:  
 Տըքնեցի, ինչպէս բու աւերակում,  
 ինչպէս միայնակ ճընճղուկ տանիքում...  
 Աստուած, տանջանքից ուժերըս հատան,  
 Միթէ չըհասաւ ժամը փըրկութեան:  
 (1898 թ.) <sup>1)</sup>

Փրկութեան ժամը չհասած բանաստեղծը իրացաւոտ ու վշտոտ սրտով պատահում է իրա նախկին ընկեր — բարեկամներին — սարին ու աղջկան ու սրանց մէջ տեղի է ունենում այս օտարոտի խօսակցութիւնը. —

— «Ինչո՞ւ այդպէս ինձ մոռացար,  
 Ասաւ աղջիկն ինձ մի որ,  
 — ինչո՞ւ այդպէս մեղ մոռացար,  
 Գանգատւեցին սար ու ձոր:  
 Ո՞հ, մի հարցնէք, հին ընկերներ,  
 Ինչու էլ չեմ երգում ձեզ.  
 Շատ եմ փոխւել այն օրից վեր,  
 Այնպէս մի ցաւ ունիմ ես...  
 — ի՞նչ է ցաւըդ, մի ճար անենք,  
 Ասաւ աղջիկն անձնըւէք.  
 — ի՞նչ է ցաւըդ, տնը, մենք տանենք,  
 Ասին սարերն ու ձորեր:  
 — Ո՞հ չէ, սիրուն, էլ ոչ մի սէր  
 Ճար չի անիլ իմ սըրտին,  
 Դուք էլ, անուշ սար ու ձորեր,  
 Զէր դիմանալ էս դարդին:  
 Ա՞խ, իմ դարդը... Բայց ո՞նց անեմ,

1) էջ 31 — «Ցրտմութեան սալմոներից»:

Որ իմ դարդը իմանաք.  
 Սիրտըս խորն է, թէ բաց անեմ,  
 Սիրտըս խորն է, լեզուս՝ փակ...» (1900 թ.) <sup>1.)</sup>  
 Իրա սիրտը, իրա նոր սիրտը բանաստեղծը չքացարեց ոչ աղջկան, ոչ էլ սարին,  
 որովհետեւ համոզւած էր թէ երկուսի սէրն  
 էլ միասին առած ճար չէին անիլ իրա դարդին և, տենչալով ոնց որ լինի բացանի իրա սիրտը — նա երանի տւեց իրա նախորդներին. —

«Երանի էր ձեզ, գովւած երգիչներ,  
 Դուք երգում էիք վաղ առաւօտեան,  
 Երբոր երազներն ապրում էին դեռ,  
 Ոսկի երազներն հայի փըրկութեան:

Զեր թարմ երգերում կար մի հայրենիք,  
 Խըրոխտ, վհապանձ, թէպէտ և գերի,  
 Եւ ձեր քընարի ձայներն երջանիկ  
 Լիբը հըրճանքով գալոց օրերի:

Ա՞խ, նա յօշոտւեց մեր աչքի առջև,  
 Եւ մեր ըզգայուն սըրտերն իրեն հետ,  
 Ոսկի երազներ, միրաժի նըման,  
 Մեր անապատում չըքացան անհետ:

Եւ մենք խորտակւած մեր կեանըի ծէպից,  
 Անյոյս ու դալուկ, ճակատներըս ցած,  
 Ընկնում է քընար մեր մատաղ ձեռքից,  
 Ընկնում են սըրտից եւ երգ, եւ Աստած:  
 (1902 թ.) <sup>2)</sup>

1) էջ 34 — «Ինչո՞ւ այդպէս»:

2) էջ 36 — «Մեր նախորդներին»:

Եւ լի դառնութեամբ բանաստեղծը արձակում է աղէկտուր և յուսահատական մի աղաղակ՝ օգնութիւն և մխիթարութիւն չըգտնելով ոչ սաղմոսների մէջ, ոչ անձնւէր աղջկայ ու սարի սիրոյ մէջ,—

«Պանդուխտ եմ, քոյրիկ, մասուկօրերից,  
Գընում եմ դէպի մի անյայտ երկիր՝  
Կըտըրւած կեանքի ամեն կապերից,  
Մենակ, տարագիր:

. . . . .

Բայց գընում եմ ես հալածւած նորից,  
Ամեն վայելքից ու բախտից հեռու,  
Նոյն իսկ հայրենի հողից ու ջըրից,  
Ինչպէս եղջերու:

. . . . .

...Քոյրիկ, բոլոր օրերը,  
Տառապանք բերին, կորուստ ու կսկիծ,  
Եւ կեանքի հաճոյքն, և կընոջ սէրը  
Ընկան իմ սըրտից:

Ես էլ վիրաւոր գընում եմ փախած՝  
Անյայտ օրերի խաւարի ընդդէմ,  
Ամենքից զըգւած, ամենքին թողած,  
Քեզ էլ կըթողնեմ...» (1902թ.)<sup>1)</sup>

Եւ այսպէս ուրեմն 1893 թւականից սկսած միալար տրտմութիւն ու տառապանք վիշտ ու թախիծ — ուր դիսսօնանս է կազմում արդէն բանաստեղծի նախկին

<sup>1)</sup> Էջ 40—«Պանդուխտ եմ»:

սէրը—իբրև մի բեկոր, իբրև անցեալի մի թանգ ու սրտառուչ յիշատակ:

### IX. ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՀՈԳԻՆ

Բայց ինչու նախկին—«սրտիս թագուհի» կամ «գու իմ սիրուն» ՚ի տեղ բանաստեղծը հիմա «քոյրիկ» է ասում: Ինչու «կեանքի հաճոյքն ու կնօջ սէրը ընկան նրա սրտից»: Ի՞նչ եղաւ: Ի՞նչ պատահեց: Պատահեց այն—ինչ որ պէտք է պատահէր ընականաբար:

Եւ մենք ասում ենք.—

Այն սոսկալի կեանքը, որ հայկական է կոչում—ուր ձեռք ձեռքի տւած թագաւորում են և տիրում ադաթն ու նախապաշարումը և մնահաւատութիւնը՝ առաջ բերելով ցաւ և աղէտ, դժբախտութիւն և թշւառութիւն, այն սոսկալի հայկական աշխարհը, ուր մարդկային լիրը սեերեսութեան հախից չի կարողանում գալ նոյն իսկ շան երես ունեցողը, ուր նամսւաը և աբուռը հալածւում են փուշի նման անհոգի անխղճութեան ձեռքին ու թաքկենում լոյս աշխարհից մերկ և ողորմելի դառած, ուր խեղճ որբերը անգութ խորթ մօր ձեռքին անձարութիւնից

թոշում են՝ դառնում հանդ ու չոլերը ընկնում նրանից ազատւելու, ուր ստրուկ, անխօս և անլեզու հայ հարսը հրէշ պատաւըսկեսուրի ձեռքից սանրը գլխին տանից դուրս է թոշում յօպովի պէս ու սար ու ձոր ընկնում «չալիկ, մալիկ, լեզուն լալիկ», ուր սիրակարօտ հայ աղջիկը զուր սպասելուց արտասուքի ծով է դառնում—որովհետև հայոց երկրում չի գտնուում նրա ակնկալած սիրոյ սրբազն անշէջ հուրը, ուր ամեներուք, մանաւանդ քաղաքներում, ամենքից պաշտում է և երկրպագւում միմիայն փայլ ու փողը, ուր ամեն բան ձեռք է բերւում փայլ ու փողի համար, ուր կատարւում է ամեն տեսակ քսութիւն և վատութիւն, ուր ուրացւում է և հալածւում և տաղանդ և բարի սիրտ, մի երկիր—«հրէշների, բրէտների ու կոյրերի», մի «ախոռ երկիր, մտրակի մարդիկ» \*) մի երկիր, «ուր ոսկի երազները չքացել են միրաժի նման» և մարդիկը—«անյոյս ու դալուկ ճակատները ցած են», մի աշխարհ վերջապէս, ուր «ընկնում են սրտից և՛ երգ և՛ Աստուած» — այս ամենը ասում ենք մենք, այս բոլոր տարրերն, ու գործօն-

\*) Մուսայի ասելով:

ները միասին առած կարող էին մի տեսակ ազդել բանաստեղծի բարի, զգայուն ու սիրող սրտի և հոգու վրա: Ահա այդ ազդեցութիւնն է, որ նրա սիրտն ու հոգին դարձրին տխուր ու տրտում, վշտոտ ու դարդոտ և թախծալի: Նա շատ շատ կտար այդ ազդեցութիւնից ազատւելու, որ ուրախ և զւարժինէր, բայց դա արդէն անհնարին էր դառել այն օրվանից, երբ նա իրա աչքը բաց արաւ ու այդ ազդեցութեանը ենթարկւեց ակամայից:

Ազատւելը անհնարին էր, որովհետև իրա հայ ծագումովն ու ծնունդովն արդէն իսկ ժառանգել էր տխրութիւնն ու տրտմութիւնը և նրա հոգու և սրտի խորքում մանկութիւնից արդէն կար դրանց սաղմը, դրա կորիզը:

Այդ կորիզը նրան անցել էր ժառանգաբար իրա հսկայ պապերիցն ու հօրից, ուրոնք նրան ու նրա նմաններին.—

«Ապրէք երեխէք—բայց մեզ պէս չ'ապրէք» ով էին օրնում:

Վշտի այդ կորիզը իրան յարմար մնունդ ստանալով շըջապատի անփոփոխ մնացած հայկական կեանքից—սկսում է աճել ու մեծանալ մինչև որ ստանում է իրա հասուն

կերպարանքը—մի ուրոյն էակի, նրա հոգու մէջ նստած և անտեսանելի ուրիշների համար: Դա այն «անդօր ծերուկն» էր, որ զրոյց էր անում հին տարւայ հետ, այն ընկերն էր, որի հետ անքուն գիշերով զրոյց էր անում բանաստեղծը: Եւ այդ վիշտ—ընկերի հետ մի մարմին դառած բանաստեղծը ապրում է մարդկանց մէջ «ժպտուն աչքերով»—կարծես մեզանից բախտաւոր լինի: Բայց իրա վշտոտ սրտում նա ունի մի թաքուն ցնորք, որ չյայտնեց ոչ անձնւէր աղջկան ու սարին, ոչ էլ իրա ներունստած վիշտը ընկերին, այլ դրսի նոյնպէս վշտի մի ընկերին:

«Իմ վեհ տենչերի, չըքնաղ վըշտերի,  
Վառ երազների մըտերիմ ընկեր,  
Դու էլ ինձ նըման՝ պանդուխտ ու գերի:  
Անզուսպ կարօտով ձըգուում ես միշտ Վեր:  
Այնտեղ, մեր հոգու սուրբ հայրենիքում,  
Խաղաղ օրերի պայծառ լուսի տակ  
Ապրում է սէրը, ժըպիտը ծաղկում,  
Ուրախ երգերը թընդում ներդաշնակ...  
Բայց, ախ, նա այնքան, այնքան է հեռու.  
Ու մինչև այնտեղ կըհասնենք մենք դեռ,  
Այնքան ենք լալու, այնքան տանջւելու,  
Իմ տանջանքների մըտերիմ ընկեր:» (1902) <sup>1)</sup>

1) էջ 37—«Ծնկիրիս»:

Մինչև այդ երգը Թումանեանը խօսում և զգում էր իրեւ հայ, միայն այստեղ է, իրա իդէալի մէջ, որ նա հայ չի, այլ կօսմոպոլիտ և կուզենար բոլոր մարդկանց, համայն մարդկութեան երջանկութիւնը:

Եւ մինչդեռ վիշտը հասարակ մարդուն ցաւ կպատճառի, Թումանեանը վշտին այնքան է ընտելացած թւում որ կարծես թէ ախորժում է նրանով տանջւելու և նրան չընաղ է անւանում:

Եւ տրամութեան այս նոր երգերից ամեն մէկը—որքան էլ որ նա կարճ լինէր—դարձեալ մի մի պօէմ է բանաստեղծի ապշրած, տանջւած, տառապած, մի ժամւայ, մի վայրկեանի կեանքի պատմութիւնըն է իրա ցաւի ու դարդի, վշտի ու թախիծի:

Եւ եթէ դուք ձեր մաքիցը կհանէք Թումանեանի այն սակաւաթիւ երգերը, որ նա նուիրել է կամ անամպ սէրը երգելու կամ կախարդ մի վլձին-մնացած բոլոր երգերը կներկայանան ձեր աչքին—ախուր, տրտում, վշտոտ ու դարդոտ, թախծալի ու սրտառուչ էլեգիաներ, իբրև հնչիւններ նրա սրտի և հոգու:

Ինչպէս մի նկարչի սիրած գոյներն ու դէմքերի որոշ արտայայտութիւնները ձեր

ԱՅ. ԱՐԵՎ 8

72

աչքին են ընկնում նրա ամեն մի նկարում,  
ինչպէս մի երաժշտական երգում հիմնական  
եղանակը տեսակ տեսակ գեղգեղումներով  
ձեր ականջին է հասնում—ձիշդ այսպէս  
թումանեանի բոլոր երգերից ձեր սրտին է  
խօսում բանաստեղծի վիշտն ու թախիծը,  
իբրև նրա հոգու էական լարը—և դրա հա-  
մար էլ մենք նրան անւանեցինք երգիչ վշտի  
ու թախիծի—և նրա այդ հոգին էլ հայ ժողո-  
վըրդինն է, հայկական է և ազգային:

Ժամանութեան առաջ առաջ առաջ առաջ առաջ  
այսպիսին պատճեն է, ուստի այսպիսին  
(Ժիշի Տիգրանով)





«Ազգային գրադարան



NL0380435

69.762

